



ԲԻՄԻԱԿԱՆ

ողակ

623.459

Կ-54

ՀԱՅԳՆՏՀՐԱՑ

ՅԵՐԵՎԱՆ

1940

523-459

4-54

«Կ»

04 AUG 2010

ՔԻՄԻԱԿԱՆ ՈՂԱԿ

ՈՒՅՆՈՒԹՅԱՆ ԶԵՆՆԱՐԿ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԽՄԲԱԿՆԵՐԻ
ՔԻՄԻԱԿԱՆ ՈՂԱԿՆԵՐԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

C

Z U S M E S Z R U S


Յ Ե Ր Ե Վ Ա Ն

1 9 4 0

Ներկա հրատարակությունը նկատի չե առնված բնակելի տների ինքնապաշտպանության խմբակների քիմիական ողակները հրամանատարների և մարտիկների համար:

Այս զրբում պարունակվում է տեղեկություններ դազանաման (ազազազազման) միջոցների և յեղանակների մասին, դազանաման աշխատանքների կազմակերպման և այդ աշխատանքները կատարելիս նախազգուշության միջոցառումները կիրառելու մասին:

Քիբըն իրենից ներկայացնում է Ա. Լյուբիմովի «Բնակելի տան դազանամանը զրբի 2-րդ լրացրած հրատարակության թարգմանությունը:



ХИМИЧЕСКОЕ
ЗВЕНО
Армгиз, Ереван, 1940 г.

I ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՏԵՐԻՏՈՐԻԱՅՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՔԻՄԻԱԿԱՆ ՎԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ ԲՆՈՒՅԹԸ

Բնակելի տան տերիտորիայում տեղի ունեցող ողային հարձակման հետևանքով կարող են քիմիական վարակման ոջաններ գոյանալ:

Քիմիական վարակումները բնույթը կախված է՝ հարձակման յեղանակից:

Կիրառվող թունավորիչ նյութերի (ԹՆ) հատկություններից՝ ԹՆ-ի բնկները վայրից:

ողերևութարանական (մետերոլոլիական) պայմաններից՝ վարակված աուարկաների մատերիալից:


ԱՎԻԱՔԻՄԻԱԿԱՆ ՀԱՐՁԱԿՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՅԵՎ ՅԵՂԱՆԱԿՆԵՐԸ

Ժամանակակից ավիացիան, ոտարերկրյա մամուլի տվյալներով, կիրառում է քիմիական հարձակման հետևյալ տերիկական միջոցները և յեղանակները:

1. Բախական ներգործության (գործողության) փիխական ավիաուումբեր (նկ. 1), վորոնք պայթում են դեանին կամ հեծանածածկին զիպչելիս, տանիքը ծակելանցներուց հետո: Ըստ կչոի աուավել ծանր ուումբերը կարող են ծակելանցներ վերին հարկի վրածածկը և պայթել սենյակում: Պատրաստում են կայուն և անկայուն ԹՆ-ով (ԿԹՆ և ԱԹՆ): Պայթյունի ձայնը խուլ է, բեկորները քիչ են, կորպուսը մասնակիորեն պահպանվում է: ԱԹՆ պարունակող ուումբի պայթման ժամանակ փոքրիկ կիսաթափանցիկ ամպ է գոյանում (նկ. 2), վորն արաղաբար ցրվում է. ԿԹՆ պարունակող ուումբի պայթման վայրում գոյանում է փոքրիկ ձաղար, ձաղարի շուրջը դանվող վայրը 10—15 մ տարածությամբ ծածկվում է ԹՆ ցալբուն:

ներով, ձազարի կենտրոնն ամենից առավել ուժեղ կերպով է յնթարկվում ցալքուններին: ԿԹՆ-ով ուղիքերը կշռում են 10—100 կգ, ԱԹՆ-ով ուղիքերը— 100—250, 500 և մինչև իսկ 1000 կգ:

2. Ցրոզ տիպի ֆիլիական ավիառուսերի, վորոնք ներկայացնում են մի թաղանթ, վորտեղ զետեղվում են ամուր մատերիալից պատրաստված 1000—2000 փոքրիկ ուղիքներ (ամպուլ): յուրաքանչյուր ամպուլ 50-ական զրամ իպրիտ է պա-




Նկ. 1. Բիմիական ավիառուսեր: Վերևում—չպայթած (մեծացրած մասշտաբով) ներքևում պայթման մոմենտում:

րունակում: Կեղևի ընդհանուր կշիռն է 50—100 կգ: Ռուսերն ընկնելիս կեղևը բացվում է, ամպուլները ցիրուցան են գալիս և, գեանին դիպչելիս կտորկտոր լինելով, գետինը վարակում են 1—1,5 մ իրարից հեռու գտնվող բծերով:

3. Հեռակայական ֆիլիական ավիառուսերի, վորոնք ոժտված են հատուկ պայթուցիկով, վորը ներգործում է ողում յերկրից 50—100 մ բարձրությամբ Այդ ուղիքերը լցված են կայուն ԹՆ-ով և սովորաբար մեծ կշիռ ունեն (100 և ավելի կգ): Ռուսերը պայթելիս ԹՆ չորս կողմերն է շաղ տրվում զգալի հեռավորությամբ և վարակում է մեծ տարածություններ (4000—10000 մ²):

4. ԹՆ շաղ տալու և դուրս քափելու գործիքներ, վորոնք իրենցից ներկայացնում են շրջահաս ձևի անոթներ 250—300 լ տարողությամբ: Հեղուկ ԹՆ դուրս մղելու և շաղ տալու համար ոգտադործվում է ողի ճնշումը թոփչքի ժամանակ: Ամենամեծ բարձրությունը, վորից շաղ են տրվում թունավորող նյութերը՝ 1500—2000 մ է: Արտասահմանում մի քանի տարի առաջ կատարված վորոշ փորձեր ցույց են տվել, վոր 1500 մ-ից 250 լ ԹՆ ունեցած դեպքում կարելի չէ վարակել մոտ 120․000 մ² տարածություն՝ վարակման խտությունը՝ 3 գ-ը 1 մ²-ին հաշվով: Մի այլ փորձի ժամանակ (ԱՄՆ-ում) ցույց է տրվել, վոր մարդու հասակի մեծություն թիրախներում կարող են շաղ տրված հեղուկի մոտ 600․000 մանրադուլն կաթիլներ դտնվել:



Նկ. 2. Անկայուն թունավորող նյութ պարունակող ուղիքի պայթյունը:

5. Ծխացող ֆիլիական ուղիքերի, վորոնց պայթման ժամանակ նրանց մեջ լցրած նյութը բոցավառվում է և մի քանի բուպեյի ընթացքում մեծ քանակությամբ թունավոր ծուխ է տալիս: Ծխի գոյացած ամպը կարող է հողմի միջոցով զգալի տարածություններ անցնել:

Բացի դրանից, չեն բացառված քիմիական վարակման ոչակն դոյանալու դեպքեր, յերբ կայուն կամ անկայուն ԹՆ կրող վար դցված ինքնաթիռն ընկնելիս շրջակա վայրը վարակված կլինի և դադաՀանում կպահանջի:

Քիմիական հարձակման միջոցների հակիրճ բնութագիրը տրված է 1 աղյուսակում, եջ 6:

ԿԻՐԱՌՎՈՂ ԹՈՒՆԱՎՈՐՈՂ ՆՅՈՒԹԻ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կիրառվող ԹՆ հատկութունները կախված են ամենից առաջ նրանց քիմիական և ֆիզիկական բնությունից: Գրական տվյալներից դատելով, ամենից առավել հավանական են հետևվյալ ԹՆ—ի պրիտ, լյուրիդիտ, ֆոսֆեն և դիֆոսֆեն, բրոմբենզիլցիանիդ, քլորպիկրին, քլորացետոֆենոն, ադամսիտ, կապտաթթու, քլոր, ածխածնի ոքսիդ, դիֆենիլքլորապեն:

Աղյուսակ 1.

Ողային հարձակման ժամանակակից ֆիզիական միջոցների բնութագիրը

	Կշիռը կգ-ներով	Վարակ. տարած. մ ² -ով	ԹՆ-ի արվը	Վարակման բնույթը կամ խտությունը
1. Բախական ներդրծության ուումբեր	10—100	300—500	ԿԹՆ	Ձազար շուրջը շաղ տված հեղուկով: Պտուլթյունը տարբեր է:
2. Բախական ներդրծության ուումբեր	100—1000	—	ԱԹՆ	Վարակված ողի ամպ է դոյանում:
3. Ցրող տիպի ուումբեր	50—100	1000—2000	ԿԹՆ	Առանձին բծեր 1—1,5 մ հեռավորությամբ:
4. Հեռակայական ուումբեր	10)-ից	4000-ից մինչև 10000	ԿԹՆ և կիսա ԿԹՆ	Պոչոր կաթիլներ. Պտուլթյունը տարբեր է: Պատերի և տանիքների ջրացումները հնարավոր են:
5. Գործիքներ ԹՆ շաղ տալու համար	մինչև 250 Լ-ից	120000 մ ²	ԿԹՆ և կիսա ԿԹՆ	Առավելագույն մանրակաթիլներ տանիքների վրա, յերկրի վրա, ասֆալտի, ծառերի վրա: Պտուլթյունը 10—15 գ/մ ² -ից ավելի չէ:
6. Ծխացող քիմ- ուումբեր	—	—	Թու. նալ. ծխեր	Ծխի ամպ

Բացի դրանից, պետք է նկատի ունենալ, վոր խմպերիալիստական պետությունների լաբորատորիաներում նոր ԹՆ-ի վորոնումներ են կատարվում, և յուրաքանչյուր տարի մամուլի մեջ են թափանցում այդ աշխատանքների արձագանքները:

Այլ բոլոր նյութերը տակտիկական նկատառումներով պետք է յերեք խմբի բաժանել:

1. Կայուն ԹՆ, վորոնք դանդաղորեն են դոյորչիանում և շրջակա առարկաները վարակում են շատ յերկարատե ժամկետներով: Որինակ, 1914—1918 թ. թ. խմպերիալիստական պատերազմի վործից հայտնի յե, վոր տարվա չոր և դով ժամանակ բրոմբենզիլցիանիդը դիմանում է մինչև յերկու որ բոլորովին բաց վայրում, վորը դնդակոծվել է արկերով: Նույն այդ պայմաններում յպրիտը կպահպանի իր թունավոր հատկությունները մի շաբաթվա ընթացքում:

2. Կիսակայուն ԹՆ, վորոնք ընդունակ են վարակելու վայրը և շրջակա առարկաները մի քանի ժամ: ԹՆ-ի այդ խումբը փոխանցիկ է, նայած ջերմաստիճանին և վայրի պայմաններին, մերթ հարում է ԱԹՆ-ին (չող յեղանակին), մերթ ձեռք է բերում կայուն ԹՆ-ի բնույթ, որինակ, ցուրտ աչնանը, կամ նկուղները ներհասելիս: Կիսակայուն ԹՆ-ի որինակներ են հանդիսանում քլորպիկրինը և դիֆոսֆենը:

3. Անկայուն ԹՆ, ազատվելով ուումբի կեղևից, դոյորչիանում են շատ արագարար, միախառնվում են ողի հետ և ամպ դոյացնում, վորը բաց և հոգմահար վայրում ցիրուցան է լինում մի քանի բոպելի ընթացքում: Վորպես որինակներ են հանդիսանում ածխածնի ոքսիդը, կապտաթթուն, ֆոսֆենը, ծխերը:

ԹՆ ճանաչելու և վնասազերծ անելու համար անհրաժեշտ է վորոշակիորեն դիտենալ նրանց հետևյալ հատկությունները:

Քլորը սովորական պայմաններում իրենից ներկայացնում է դեղնա-կանաչ գույնի դազ. հեղձուցիչ հոտով, վորը նման է քլորակրի կամ ժավելի հոտին: Ծնորհիվ հատուկ հոտի ու գույնի, քլորը հեշտությամբ կարելի յե դանազանել մյուս ԹՆ-ից: Գազակերպ քլորը 2,5 անգամ ավելի ծանր է ողից: Մարդկանց և կենդանիների որդանիզմի վրա ներդրծում է հեղձուցիչ կերպով:

Պոնավության առկայությամբ քլորն ուտում է գրեթե բո-

լոր մետաղները, մանավանդ գունավորները, ուստի և մեծ վրտանդ կարող են ներկայացնել տեխնիկական բարդ որակներին համար, որինակ, հեռախոսային կայաններին, ռադիոհանգուցաներին, էլեկտրակայաններին, յերկաթուղու կայարաններին և այլն: Այս դեպքում վորպես նախազգուշական միջոցառումներ հանձնարարվում և սարքավորման և մեխանիզմների յուղումը տավրթով և այլ հանքային յուղերով:

Օ՝-ում 1 ծավալ ջրում լուծվում է 4,6 ծավալ ջրը:

Քլորը 1914—1918 թ. թ. համաշխարհային պատերազմում կիրառվում էր զաղաբալունային դրոհների ոգնութամբ: Սակայն առավել տրքսիկային (թունավոր) թ՛ն, յերևան դարուց հետո, ջրը թողնվեց:

Քլորը լավ պահվում և մանավանդ բրդե գործվածքներում: Խոնավության ազդեցության ներքո մատերիալի դանդաճում հիզրողից է կատարվում (քայքայում ջրով), ընդվորում գոյանում են հիպոքլորային աղաթթուներ, վորոնք փչացնում են գործվածքը: Սակայն հողմահարման ժամանակ ջրը հեշտութամբ ցնդվում է: Մնդամթերքները նույնպես ջրը են կլանում, վորը հեշտութամբ կարող է հեռացվել հողմահարմամբ:

Գազահանման համար կիրառվում է նատրիումի հիպոսուլֆիտի կամ սոդայի լուծույթը:

Փոսֆենը սովորական ջերմաստիճանում անգույն գազ է բորբոսնած խոտի¹ հոտով: Ուղի +8,2-ից ցածր ջերմաստիճանում Փոսֆենը խիստ ցնդուն հեղուկի յե փոխարկվում: Գաղափերը Փոսֆենը 3,5 անգամ ծանր է ուղից:

Գազահանման համար կարող են ոգտագործվել ուտիչ նատրոնը և ամոնիակի ջրային լուծույթը:

Բացի դրանից, Փոսֆենի զաղահանման համար հանձնարարվում է հետևյալ ուղեկալի (դեղաղրի) կիրառումը.

բյուրեղային սոդա	60 գ.
նատրիումի հիպոսուլֆիտ	30 գ.
ուտիչ նատրոն	5 գ.
ջուր	1 լ.

1) Փոսֆենի թույլ կոնցենտրացումները, վորոնց ժամանակ դժվար է նրա հոտը տարբերել, իրենց ներկայութունն զգալ են տալիս անհանելի համով թունավորված մթնոլորտում պապիրոս (գլանակ) ծխելիս:

Դիֆուզենն անգույն հեղուկ է բորբոսնած խոտի հոտով (տես. Փոսֆեն) և յետման 127,5° ջերմաստիճանով: Իր հատկութուններով դիֆուզենը շատ բանում նման է Փոսֆենին, բայց զգալիորեն ավելի պակաս ցնդուն է, վորի շնորհիվ տվյալ վայրում առավել յերկարատե ժամանակ է պահվում — ամառը դաշտում մոտ 1,5 ժամ, ցածր վայրերում մի քանի ժամ, առավել յերկարատե՝ անտառում և վատ հողմահարվող քաղաքային բակերում և կառուցումներում (չենքերում):

Գազահանման համար կարող են նույն այն նյութերը ոգտագործվել, վորոնք մատնանշված են Փոսֆենի համար:

Ածխածնի ոֆսիդն անգույն, սոսանց հոտի և զրդուիչ հատկութունների գազ է, ուստի և վերջինս կարելի յե հայտարբել միայն դազորոշիչի միջոցով: Վորպես զաղահանման յեղանակ ծառայում է հետևյալ բաղադրության լուծույթի հողմահարումը կամ փոչեցրումը.

պղնձի մոնոքլորիդ	100 գ.
ամոնիումի ջրըրիդ	180 գ.
ամոնիակ (տեսակարար կշիռը 0,91) 25%	400 գ.
ջուր	1 լ.

Ածխածնի ոքսիդից պաշտպանվելու համար պահանջվում է հատուկ հակադազ:

Կապտաքքուն անգույն, ցնդուն, դյուրաչարժ (չարժուն) հեղուկ է դառը նչի հոտով:

Կապտաթթվով վարակված ողը զաղահանելու համար, հողմահարումից զատ կարող են ոգտագործվել հետևյալ լուծույթները.

1. յերկաթի արջասպ	50 գ.
ջուր	1 լ.
2. պղնձի արջասպ	70 գ.
ջուր	1 լ.

Քլորպիկրինը խիստ ցնդուն, անգույն հեղուկ է: Յեռման ջերմաստիճանը — 112: Քլորպիկրինը, դիֆուզենի նման, կիսակայուն թունավորող նյութ է: Ըստ դրական տվյալների ջրորպիկրինն ընդունակ է վարակելու մինչև իսկ բաց վայրը մոտ 5—6 ժամ ժամանակով:

Վո՛չ ջրով, վո՛չ թթուներով, վո՛չ ալկալիներով քլորալիլ-
րինը չի քայքայվում:

Քլորալիլը զաղահանելու համար կարելի չէ ողտադործել
ծծմբական նատրիումի (սուլֆիդի) սպիրտալրային լուծույթը,
վորի հետ քլորալիլը յեռանդադին փոխներդործում է և վոր-
պես հետևանք մնասաղեքծ է դառնում:

Քլորալիլը շինութունները պարզ և մատչելի յեղանա-
կով դաղահանելու համար կիրառվում է ջերմային յեղանակը—
ջերմաստիճանի բարձրացումը վարակված շինութան մեջ և այն
առարկաների տաքացումը, վորոնց մեջ պահվել է քլորալիլը:

Քլորալիլը լավ կլանվում է հազուստից, բայց ողում
հողմահարվելու ժամանակ հեշտությամբ ցնդվում է և այնտեղից:

Բրոմբենզիլիցիանիդ (կամիտ): Տեխնիկական բրոմբենզիլ-
ցիանիդն իրենից ներկայացնում է դարչնագույն նրբերանդի
բյուրեղներ, իսկ 16⁰-ից ստավել բարձր ջերմաստիճանում—
թուխ գույնի հեղուկ: Դա ուժեղագույն արտասվաբեր ԹՆ-ից
մեկն է:

Բրոմբենզիլցիանիդը չափազանց դանդաղ է գլորելիանում,
ուստի և յերկար պահպանվում է վարակված վայրում (մի քա-
նի որ շարունակ): Նրա կայունության շնորհիվ փակ շինու-
թյունների դաղահանումը պարզ հողմահարման ճանապարհով
դժվարին է:

Բաց վայրում բրոմբենզիլցիանիդը դաղահանելու համար
կիրառում են ծծմբական նատրիումի (սուլֆիդի) թունդ լու-
ծույթները: Վորովհետև այդ դեպքում վորոչ քանակությամբ
մնասակար ծծմբալրածին է դատվում, այդ ներքին շինու-
թյունների դաղահանման համար նատրիումի սուլֆիդը չի հանձ-
նարարվում:

Շինության ներսում բրոմբենզիլցիանիդը դաղահանելու հա-
մար կարելի չէ ողտադործել այսպես կոչված հակաֆոսֆենա-
յին լուծույթը.

բյուրեղային սոդա	60 գ.
նատրիումի հիպոսուլֆիտ	30 գ.
ուտիչ նատրոն	5 գ.
ջուր	1 լ.

Քլորացետոֆենոն (գրանդիտ) սպիտակ բյուրեղային նյութ

և մանուշակի հաճելի հոտով և հարման 56—58 ջերմաստիճա-
նով: Կարող է կիրառվել ծխացող և բեկոր-քիմիական ալիա-
ուումբերում:

Գաղահանման համար կարող է ողտադործվել ծծմբական
նատրիումի (սուլֆիդի) սպիրտային լուծույթը, իսկ ըստ ո-
տարերկրյա մամուլի ավյալների, սողայի ջրային լուծույթը:

Քլորացետոֆենոնի ծխի մասնիկները նստելով հազուստի,
կահույքի, անդամթերքների վրա, վարակում են դրանք:

Ծխի ամպերը վոջնչացվում են հողմահարմամբ կամ ար-
հետական ողափոխությամբ (վենտիլացմամբ):

Աղամսիտը կանաչ կամ մուգ դարչնագույն բյուրեղային
նյութ է, առանց հոտի:

Կիրառվում է ծխազլանակներում, բեկոր քիմիական և ծխա-
ցող ուումբերում, թունավոր ծուխ դոյացնելով:

Աղամսիտը դանդաղորեն քայքայվում է սառը ջրով, տա-
քով ավելի արագաբար: Ալկալիներն արագացնում են այդ ու-
ակցիան: Ծխի մասնիկները, ընկնելով հազուստի, կահույքի,
անդամթերքների վրա, վարակում են դրանք:

Լյուիդիտ: Տեխնիկական լյուիդիտը մուգ թխագույն հեղուկ
է խորդենու հոտով, 1,9 տեսակարար կշռով և սառուցման
—15 ջերմաստիճանով:

Լյուիդիտը դանդաղորեն քայքայվում է ամոնիակով մի քիչ
ալկալացրած ջրով: Ուտիչ նատրոնի թունդ լուծույթները
(15%) լյուիդիտին լիովին քայքայում են ճիշտ այնպես, ինչ-
պես և ծծմբական նատրիումի (սուլֆիդի) ջրային լուծույթ-
ները:

Լյուիդիտը լուծելի չէ կերոսինում, բենզինում, բենզոլում
և սրանց նման որդանական լուծիչներում, ինչպես նաև կաու-
չուկում: Լյուիդիտն ավելի պակաս կայուն է, քան իսրիտը:

Իսրիտ: Տեխնիկական իսրիտը դարչնագույն նավթաման
հեղուկ է այնպիսի հոտով, վորը հեռավոր կերպով հիշեցնում
է մանանխը: Իսրիտը հեշտությամբ ներծծվում է բուսական
և կենդանական ծագում ունեցող բոլոր նյութերի մեջ:

Քիմիապես մաքուր իսրիտը հոտ չունեցող անդույն հեղուկ
է: Արտասահմանում հայտնի չեն այս պրոպուլտը դործարանա-
յին ճանապարհով ստանալու փորձերը: Նրա ճանաչումն այդ

ձևով սաստիկ դժվարացած: Ե: Յերբեմն հոտը քողարկելու համար իպրիտը խառնում են ուրիշ ԹՆ հետ (Այուրիզիտ, գիֆոս-գեն) կամ սաստիկ հոտավետ նյութերի հետ:

Տեխնիկական իպրիտի տեսակարար կշիռն է 1,3—1,5, այսինքն նա ջրից ծանր է գրեթե 1½ անգամ և ջրամբար ընկնելու ժամանակ արագաբար նստում է հատակին:

Մոտ +5 ջերմաստիճանում իպրիտը սառչում է, բայց իպրիտի խառնուկը հարմար լուծիչի հետ սովորաբար սաստիկ իջեցնում է սառեցման ջերմաստիճանը, ուստի և կարելի յե իպրիտի կիրառումն սպասել նաև ձմեռային պայմաններում:

217 ջերմաստիճանում իպրիտը յեռում է, մասնակիորեն քայքայվելով, 500 ջերմաստիճանում իպրիտի մոլեկուլները լիովին քարուքանդ են լինում: Գազահանման տեխնիկայում ուղտը վում են այդ հատկությունները չիկացնելով վարակիված առարկաները, յեթե նրանք առանց վնասի դիմանում են բարձր ջերմաստիճաններին:

Իպրիտի լուծելիությունը ջրում չնչին է, որինակ 10 ջերմաստիճանում մի լիտրում կարող է լուծ 0,7 գրամ լուծվել: Այնուամենայնիվ այդ քանակը մի քանի անգամ դերադոնցում է այն դոզային, վորը բավական է սրբանիղմը վարակելու համար:

Իպրիտը լավ է լուծվում շատ սրբանական հեղուկներում. կերոսինում, բենզինում, ածխածնի տետրաքլորիդում, ալիլտոլում, բենզոլում, յեթերում, մեքենային յուղում, տալուտում և ուրիշներում: Այս հատկությունն սպտադործվում է իպրիտը վարակիված մետաղից լվացմամբ հեռացնելու համար:

Իպրիտը շատ դանդաղորեն է դորըչիանում: Հայտնի յե, վոր տեխնիկական իպրիտը, չաղ տրվելով վայրում, պահպանում է իր վարակիչ հատկությունները մոտ 6—12 ժամ 20°-ում ամառը, 16°-ում՝ մինչև յերկու որ դարնանն ու աչնանը և մինչև 3—4 որ ու պելի—ձմեռը:

Չոր քլորակիրը և կայցիումի հիպոքլորիտը բուռն կերպով փոխնեղործում են իպրիտի հետ (յերբեմն մինչև անգամ բոց յերևան դալու առկայությամբ), վորի հետևանքով իպրիտը վրնասագերծ է դառնում: Այս սեակցիայի թերությունը հանդիսանում է հեղուկ իպրիտը փոշիակերպ քլորակիրի հետ հպման

բերելու անհրաժեշտությունը, մի հանգամանք, վորը յերբեմն դժվարություններ է ձեռք բերվում, որինակ, իպրիտը ներծծվելու կամ ձեղքերը ներհոսելու ժամանակ:

Այդ դեպքերում քլորակիրը լավ խառնում են ջրի մեջ: Չրային լուծույթները զգալիորեն պելի դանդաղ են հականերդործում:

[+5-ից ցածր ջերմաստիճանում (այսինքն, յերբ իպրիտը սառչում է) քլորակիրը դործնականապես գրեթե չի փոխներդործում իպրիտի հետ:

ԹՈՒՆԱՎՈՐՂ ՆՅՈՒԹԻ ԸՆԿՄԱՆ ՎԱՅՐԸ

ԹՆ-ի ներդործության յերկարատևությունը, հետևաբար և դադահանման յեղանակը զգալի աստիճանով կախված են այն վայրից (տերիտորիայից), վորտեղ ընկել է ԹՆ: ԿԹՆ ինքնաթիռներից չաղ տալիս և հեռակայական ուղւբերի պայթման ժամանակ հավասարաչափ վարակվում է բնակելի տան վողջ տերիտորիան, իրեն կից կառուցումների հետ միասին (մայթ, նախապարտեղ, սրահներ, տանիքներ):

Վարակիված մակերեսներում կարելի յե հայտաբերել տարբեր մեծություն կաթիլներ: Վարակման յտությունն այդ դեպքում սովորաբար չի անցնում 3—5 գ-ից՝ 1 մ²-ին: Հողմազուրկ յեղանակին վարակվում են առավելապես հորիզոնական մակերեսները, քամու առկայության դեպքում, հողմաբեր կողմից ցողվում և վարակվում են նաև պատերը: Վարակման այս յեղանակի դեպքում վարակիված կարող են դուրս գալ խիտ մեծ տերիտորիաներ:

Այդպիսի դեպքերում վարակումները լիվիդացիայի յենթարկելու համար պետք է կանչվեն տեղական ՀՈՊ-ի մեխանիկական միջոցներով դուրսբալորված տեղամասային կամանդները (խումբերը):

Վորոշ դեպքերում հարկ կլինի սահմանափակվել վարակման տեղամասի ցանկապատմամբ կամ այդ վայրի մասնակի դադահանմամբ, հետագան թողնելով ինքնադադահանմանը:

Բաց ողում քիմիական ուղւբեր պայթելիս պետք է հաշվի առնել այդ վայրի «հողմահարելիությունը»: Յեթե ըստ ողւբերություններից քարտեղի այդ վայրը հարմար վայր է դուրս

դալիս ԱԹՆ-ի կանգառման համար, ապա հարկ ե լինում հատուկ միջոցներ ձեռք առնել դադաճանման համար (տես. չորրորդ գլուխը) և միայն վորոշ դեպքերում կարելի յե հույս դրնել ինքնադադաճանման վրա: Յեթե, սակայն, ուումբերը պատրաստված են (լցված) ԿԹՆ-ով, ապա անհրաժեշտ ե կատարել ձագարի անհապաղ ցանկապատումը և դադաճանումը, ինչպես նաև նրա շրջակայքինը:

Անհամեմատ ալիլի մեծ գլխացայանք ե ստացվում բնակելի տան շրջակայքում վորոշ բարձրությամբ հեռակայական ուումբը պայթելիս, վորովհետև այդ դեպքում չղաչտղանված պատուհանները դուրս կմղվեն պայթուցիկ ալիքով, և ԹՆ կարող ե առատորեն հեղեղել բնակարանների պատերը, շրջանակները և ներսի մասը անային կենցաղի բաղձաղան առարկաների հետ: Բնակարանների և պատերի դադաճանման դեպքերը նկարագրված են չորրորդ գլխում:

Յեվս առավել բաղձահող դեպք կլինի, յերբ, ներս թափանցելով վրածածկի միջից կամ ալ ճանապարհով, ուումբը պայթի բնակարանի ներսում: Ողախության (հողմահարման) անընդամատ պայմանները, ինչպես նաև փափուկ կահույքի և փայտե առարկաների առկայությունը խիստ դժվարին պայմաններ են ստեղծում դադաճանող կամանդներին աշխատանքի համար:

ՈՂԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ՊՈՅՄԱՆՆԵՐ

ԹՆ-ի կայունության և ինքնադադաճանման վրա մեծ ազդեցություն են ունենում քամին, տեղումները, ողի ջերմաստիճանը և վայրի կոնֆիգուրացումը:

Քամի: Այն թունավորող նյութերը, վորոնք ողի մեջ են մտցվել, շարժվում են նրա հոսանքները հետ միասին: Այդ հանդամանքն առաջ ե բերում ԹՆ-ի ցրումը մթնոլորտում, ընդվորում այդ ցրման ստուգությունն ամենից առաջ կախված ե քամու արագությունից: Մի վայրկյանում 6—7 մ արագության ժամանակ ցրումն այնքան արագ ե կատարվում, վոր դադաճանման անհրաժեշտությունը վերանում ե:

Ջերմաստիճանը մեծ նշանակություն ունի ԹՆ-ի դիմացկու-

նության իմաստով և աղղում և դադաճանման միջոցների ընտրության վրա:

Բարձր ջերմաստիճանն առաջ ե բերում ԹՆ-ի ուժգին դուրբիացումը և այդ բանը սաստիկ փոքրացնում ե նրա կայունությունը, բայց միևնույն ժամանակ մեծացնում ե ԹՆ-ի կոնցենտրացումը¹ վարակված տեղամասում:

Ողի այն կոնվեկցիոն (վերամբարձ) հոսանքները, վորոնք դոյանում են ցերեկը յերկրի մակերևութի տաքանալուց, մեծ նշանակություն ունեն ԹՆ ցրելու համար: Տաքացած ողը, յերկրից բարձրանալով, իր հետ սանում ե ԹՆ և հենց դրանով սաստիկ նպաստում ինքնադադաճանման: Կոնվեկցիան հատկապես ուժեղ ե շող սրերին:

Ցածր ջերմաստիճանները դանդաղեցնում են քիմիական շատ ուսակցիաներ, որինակ՝ +5-ից ցածր ջերմաստիճաններում քլորակիրը զրեթե չի փոխներդրում իսրիտի հետ, վորն այդ ջերմաստիճանում սովորաբար պնդանում ե:


Տեղումներ: Պակաս կարևոր նշանակություն չունեն տեղումները ԹՆ-ի դիմացկունության համար: Սաստիկ անձրևի պահին մի քանի ԹՆ քայքայվում են ջրով, մի քանիսը լուծվում են ջրում կամ մեխանիկորեն լվացվում են հոսանքներով: Ջրուը, ընկնելով ԿԹՆ-ով վարակված տեղամասի վրա, քողարկում ե թունավորող նյութի հետքերը և կարող ե մինչև դուրս կասեցնել նրա գոլորչիացումը:

Վայրի կոնֆիգուրացիան մեծ ազդեցություն ունի դադաճանման վրա քաղաքային պայմաններում: Իր ճանապարհին դադաճան խոչընդոտների հանդիպելով, քամին կարող ե փոփոխել իր ուղին, շեղվելով տիրապետող ուղղությունից: Ընդամին կամ փոքրանում ե նրա արագությունը կամ ողային հոսանքները փոթորկի պտույտներ են դոյացնում: Հողմի այդ տեղական շեղումները յերբեմն կարող են նպաստել ԹՆ-ի արագ ցրմանը, իսկ վորոշ դեպքերում կանգառում ստեղծել: Այդ յերևում ե Յ նկարում, վորտեղ ցույց ե տրված ուղղաձիգ խոչընդոտի ազդեցությունը:

Այդ խոչընդոտի առջև, շնորհիվ ողային շարունակ նո-

¹ ԹՆ-ի կոնցենտրացումը կոչվում ե ԹՆ-ի այն քանակությունը, վորը գտնվում ե 1 մ³ կամ 1 լ ողում:

րանոր մասսաների առհասաման, ստեղծվում է մի տարածութիւն ողբի վորոշ հենարանով (կեռացրած սլաքներ ձախ կողմից)։ Այդ բանն ողբի հոսանքին հարկադրում է, խոչընդոտին չհասած, վերև բարձրանալ և առաջ է բերում խոչընդոտի «չըրջահոսութիւնը»։ Այնուհետև ողային մասսաները կսկսեն վարելնել, ընդվորում խոչընդոտի հետևում անմիջականորեն փոթորկային շարժումներ են դոյանում, իսկ սան հակադիր պատի մոտ (աջ անկյունում վորոջ—կեռացրած սլաքներ) այսպես կոչված անեմոմետրիկ ստվեր է ստեղծվում (հողմաչափական)։ Այստեղ ծագում են սլայմաններ, վորոնք բարենպաստ են թ՛ն-ի կանդաման համար, և մինչև իսկ ավելին— այս ողային սլարկի մեջ դոյուրութամբ կարող են վարակված ողբի հոսանքներ ընկնել փոթորկացման բնագավառից և այնտեղ յերկար ժամանակ կանգ առնել։



Նկ. 3 Ուղղածիկ խոչընդոտի ազդեցութիւնն ողային հոսանքների վրա։

Նեղ փողոցներ և բարձր շինութիւններ ունեցող քաղաքներում ողային հոսանքների ուղղութիւնները կարող են խստորեն տարբերվել հողմի տիրապետող ուղղութիւնից։ Այդ դեպքերում, որինակ նրբանցքներում, հաճախ կարելի չէ մի շարժում դիտել, վորն ուղղահայաց է այդ ուղղութիւնը, ընդվորում հարևան փողոցներում ստեղծվում են փոթորկացած հոսանքներ՝ խառնիխուռն ուղղութիւնով։ Մի վայրկյանում 7—8 մ քամու ժամանակ այն փողոցները, վորոնք ընկած են քամու

ուղղութիւնով, դոյուրութամբ հովահարվում են։ Թ՛ն-ի կանդամաները հատկապես դոյուրին կերպով են դոյանում այն տունըրհոսներում, վորոնք կառուցված են II տատի կամ վիակ բացմանկյունու ձևով։

Մի շարք վորձեր ցույց են տվել, վոր քամու փոքր և միջին արագութիւնների ժամանակ (մինչև 3—4 մ/վ) դժվար է հաստատել վորևէ որինաչափութիւնն ողային այն հոսանքների դասավորման մեջ, վորոնք շարժվում են մեծ քաղաքի փողոցներով։

ՎԱՐԱՎԱԾ ՈՒՅՅԵԿՏՆԵՐԻ ՄԱՏԵՐԻԱԼԸ

Ձանաղան շինանյութեր, յերբ նրանց վրա հեղուկ թ՛ն են ընկնում, կներծծեն վերջիններս, ընդվորում թափանցման խորութիւնը կախում կունենա մատերիալի հատկութիւններից։ Հատկապես յերկարատև վարակման են յենթարկվում մատերիալները (բացի մաքուր մետաղից և ապակուց) նրանց վրա հեղուկ իպրիտ ընկնելիս։ Իպրիտի դոյուրչիացումը շատ շինանյութերից շարաթներ է տևում։


Ադյուսը և սվաղը չորհիվ իրենց մաղականութիւն (կաղիլ լարութիւն) իպրիտը ներծծում են շատ արագաբար. մի քանի վայրկյան տևողութիւնով՝ 0,5—1 մմ, 1/2 ժամից հետո իպրիտը թափանցում է 3—4 մմ. խորութիւնով, իսկ մի ողբից հետո — մոտ 1 սմ։

Միջին չափի կաթիլը չներկված փայտի մեջ է թափանցում մինչև 1,5 սմ խորութիւնով և այս ու այն կողմերն է հոսում նրբաթելերի ընթացքին համաձայն։ Իպրիտն ամենից քիչ է թափանցում կարծր տեսակների մեջ (կաղնու մեջ 2 մմ-ից վ՛նչ առավել)։

Թափանցման խորութիւնը ճաքճռուված փայտի մեջ կախված է պատասխանների խորութիւնից։ Այդ բանի չորհիվ սոսնձած Փաները իպրիտն անց է կացնում 2—3 շերտի միջով։ Սալահատակի չորսու մարդակի մեջ կաթիլները թափանցում են մոտ 5 սմ խորութիւնով։

Յուղաներկով յերանգավորված փայտի մեջ իպրիտը գրեթե չի թափանցում, պահվելով (լուծվելով) հենց ներկի շերտում (1—2 մմ), յեթև ներկը չի ճաքճաքվել։ Վորովհետև


2720
40
Քիմ. ողակ— 2



ձեղբւածքներ չեն ունենում միայն թարմ յերանգավորված մակերեսները (2—3-ամսյա վաղեմության), ապա յուղաներկերը չեն կարող բավականաչափ պաշտպանութիւն յերաշխապնորել իւրիտի կաթիլներից:

Բետոնի և ասֆալտավորված բետոնի մեջ իւրիտի կաթիլը թափանցում է մի քանի միլիմետրից մինչև 4 սմ խորությամբ և լայնորեն տարհոսում է չորս կողմը:

Մաքուր մակերես ունեցող մետաղի մեջ իւրիտը չի թափանցում: Այն մետաղները, վորոնք ծածկված են ժանգով, շէնորհիվ վերջինիս ծակոտկենության, հաստատապես հետ են պահում իւրիտը: Չերանգավորված մետաղները, վորոնք առատորեն ծածկված են քսուքով, չեն վարակվում, վորովհետև իւրիտը լուծվում է քսուքում (վորը դրանից հետո ինքն է վարակման աղբյուր դառնում):



Նկ. 4. Իւրիտի ներթափանցման միջին խորութիւնը:

Իւրիտն ապակու մեջ չի թափանցում:

Տեֆալի և քաղիֆե գործվածքների մեջ իւրիտը շատ արագ և խորն է թափանցում: Որինակի համար, շինելի կոպրտ

մահուլն անց է կացնում իւրիտը 3—5 րոպեյից հետո, անդրավարաիջի մահուլը— մի րոպեյից հետո, բամբակե և թեթև բրդե գործվածքները— մի քանի վայրկյանների ընթացքում:

Խետիմում իւրիտը դանդաղորեն է լուծվում: Իւրիտի կաթիլը հակազազային կորզակի միջից թափանցում է 15 րոպեյից հետո, ռետինե ձեռնոցների (տեխնիկական) միջից 30—45 րոպեյից հետո:

Մաշկը բավական արագ է անցկացնում իւրիտի կաթիլները, որինակ, կաշվե կոշիկների յերեսը և ճիտքերը 5—10 րոպեյից հետո:

Միտակ ոլիֆած գործվածքները պահում են իւրիտը հեղուկ դրությամբ մոտ 30 րոպե, իսկ կրկնակիները — մոտ 6 ժամ:

Հողը վարակվում է տարբեր խորությամբ, նայած կաթիլի մեծությանը և հենց հողի բնույթին (ալաղ, կավ և այլն): Միջին մեծության կաթիլը թափանցում է 8—10 սմ խորությամբ: Իւրիտի լծակների առկայությամբ հողի մեջ նրա ներթափանցելու խորութիւնը հասնում է 30 սմ: Չյան ծածկույթը վարակվում է (նայած ծածկույթի խտության և իւրիտի լուծիչի բնույթին) 2—20 սմ խորությամբ, գլանահարթ ճանապարհին սովորաբար 2—3 սմ, խոպանում—մոտ 8 սմ:

Տարբեր մատերիալների մեջ տեխնիկական իւրիտի ներթափանցելու միջին խորութիւնը ցույց է տրված 4 նկարում:

ՅԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Վորովհետև տարբեր մատերիալների խորքը ներթափանցած թՆ հանելը խիստ դժվարին ոպերացիա յե (գործառնութիւն), ապա պետք է ձեռք առնվեն նախնական պաշտպանության բոլոր միջոցները (քսուք, պատյան, թասակներ և այլն): Նույն այդ նկատառումներով բոլոր գաղահանման աշխատանքներում անհրաժեշտ է հիշել հետևյալը. վորքան վորքազույն ժամկետներ տրամադրվեն թՆ-ին՝ վորևէ մատերիալների խորքը ներթափանցելու համար, այնքան առավել ներդործոն և դյուրին կերպով կարելի կլինի իրադործել գաղահանումը:

II ԲՆԱԿԵԼԻ ՏՍՆ ԳՍՁԱՀԱՆՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Գաղահանման միջոցները բաժանվում են՝
 դաղահանող նյութերի և

դաղահանման տեխնիկական միջոցների:

Գաղահանող նյութերը կամ վնասազերծ են անում թՆ, կամ լուծում, կամ կլանում են այն:

Տեխնիկական միջոցները ծառայում են դաղահանող նյութերը՝ վարակված առարկաների հետ նրանց սերտ կոնտակտը (հըպոլումը) պահպանելու նպատակով դասավորելու համար:

ԳՍՁԱՀԱՆՈՂ ՆՅՈՒԹԵՐ

ՔԼՈՐԱԿԻՐ

Քլորակիրը (չպարային) սպիտակ փոշի յե քլորի հոտով:


Թարմ պատրաստված քլորակիրը պարունակում է 36—38% «ակտիվ քլոր», վորը ծառայում է վորպես ցուցանիչ նրա դաղահանող հատկություններից, և 140/6-ից վո՛չ ավելի խոնավություն: Քլորակիրը շատ անկայուն միացություն է, ողում առաջորեն քայքայվում է, ածխաթթու և մանավանդ խոնավություն կլանելով: Ընդմիջ նա կորցնում է իր «ակտիվ քլորը» և դուռը դառնում:

Քլորակիրի քայքայումը նկատելիորեն արագանում է բարձր ջերմաստիճանում և առանձնապես արագորեն (յերբեմն մի քանի րոպեյում) արևի անմիջական լույսի ազդեցության ներքո: Խոնավությունը նշանակալիորեն մեծանալիս քլորակիրը փչանալու հակում է ձեռք բերում, դադարում է դուրս թափվել դաղահանման ապարատներից և կամար է դոյացնում նրանց արտացանման բացվածքի վրայից: Այն քլորակիրը, վորը 15 %-ից պակաս ակտիվ քլոր է պարունակում, անպետք է իպրիտի դաղահանման համար:

Քլորակիրի պիտանիությունը վորոշում են ակտիվ քլորի տոկոսով, վորը լաբորատորական միջոցների բացակայությամբ վորոշում են հատուկ ապարատի— քլորանալիզատորի—(նկ. 5) միջոցով: Վերջինս բաղկացած է հեղուկաչափից (№ 1), քայքայական թթու պարունակող կաթիլաչափից (№ 2), «100 սմ³»

նիշով (№ 3) սրվակից, հիպոսուլֆիտի լուծույթով սրվակից (№ 4), ապակե չափոցից (№ 5) և մթադնած փորձանոթից (№ 6)՝ կալիումի յոդիդի տաբլետիկներով:

Ամբողջ քլորանալիզատորը տեղավորվում է փայտե արկղիկում՝ 10×10×15 սմ չափով:



Նկ. 5. Քլորանալիզատոր

Ակտիվ քլորի տոկոսի վորոշումը կատարվում է հետևյալ կերպով.

- 1) «100 սմ³» նիշ կրող № 3 սրվակի մեջ № 5 չափոցի ողնությունում 0,5 գ քլորակիր են ածում:
- 2) Ջուր են ավելացնում մինչև «100 սմ³» նիշը.
- 3) փորձանոթից (№ 6) կալիումի յոդիդի տաբլետիկ են նետում.
- 4) կաթիլաչափից (№ 2) քանի կաթիլ քայքայական թթվով թթվեցնում են.
- 5) Թափահարում են մինչև տաբլետիկի լիակատար լուծումը.
- 6) տխրում են (ածում են կաթիլ առ կաթիլ) մինչև լիակատար դուռնաթափումը այն հեղուկաչափից (№ 1), վորի մեջ նախորդ № 4 սրվակից հիպոսուլֆիտի լուծույթ են ցնում մինչև «0» նիշը:

Հիպոսուլֆիտի լուծույթի ծախսումը, վորը հաշվված է № 1 հեղուկաչափի սանդղակով, ցույց է տալիս ակտիվ ջրի տոկոսը ջրրակրի մեջ:

Քլորակիրը սաստիկ ներգործում է մետաղների վրա, մանավանդ պղնձի վրա, ուսելով հիշյալները: Ուստի դազահանման գործիքների բոլոր մետաղական մասերը պետք է լավ ներկված լինեն, իսկ ջրրակրի հետ կատարելիք աշխատանքից հետո հարկավոր է վերոհիշյալներն ուշի-ուշով լվանալ, սրբել ախնքան, վոր չորանա, և յուղ քսել: Նուրբ մեխանիզմների և մետաղական վողորկած մակերեսների դազահանման համար չի կարելի կիրառել ջրրակիրը:

Քլորակիրը, հազուադեպ վրա ընկնելով, փոփոխում է նրա դուրսը և քայքայում գործվածքը: Կաշվե վոտնամանը նմանապես փչանում է ջրրակրից:

Մարդու կաշին (մաշկը) ջրրակրից կոշտանում է, չորանում և ճաքճաքում: Ըրձաթաղանթները բորբոքվում են: Ուստի բոլոր աշխատանքները ջրրակրի հետ պետք է կատարվեն սեռինե կաշիկներ և ձեռնոցներ հագած, նույն և չոր ջրրակրի հետ կատարվող աշխատանքի ժամանակ, աշխատանքը պետք է վարել, նաև հակադազ հագած:

Չոր ջրրակիրը յեռանդազին փոխներդործում է խլրիտի և լյուիզիտի հետ, յերբեմն պայթյունով, քայքայելով դրանք: Ուստի խլրիտի լճակները դազահանման յենթարկելիս այդ կիրը խառնում են ավազի կամ հողի հետ (1:1): Չրի և ջրրակրի խառնուրդը խլրիտի հետ փոխներդործում է նշանակալիորեն ավելի թույլ կերպով: Ծաս հեղուկ շիլան (այսպես կոչված «ջրրակաթ») ոժտված է պակաս դազահանման հատկութուններով և դազահանման համար անպետք է: Ամենից առավել դործածական խառնուրդներ հանդիսանում են հետևյալները.

հորիզոնական մակերեսների համար 0,8 կգ (1 լ) ջրրակիր + 1 լ Չուր-ուղղածիզ մակերեսների համար 1,5 կգ (2,0 լ) ջրրակիր + 1 լ Չուր:

Պեաք է շիլան պատրաստել իր գործածությունից անմիջականորեն առաջ, վորովհետև նա արագորեն քայքայվում է: +5-ից ցածր ջերմաստիճաններում, ջրրակիրը խլրիտի դազահանման համար անպետք է:

Ծախսման նորմաները զանազան դեպքերի համար մատնանշված են I հավելվածում:

ԿԱԼՅՈՒՄԻ ՀԻՊՈՎՈՐԻՏ

Կալցիումի հիպոքլորիտն սպիտակ փոշի յե ջրրի հոտով: Քարմ պատրաստված պրոզուկտը 60—75% ակտիվ ջրր է պարունակում: Նրա կայունությունը պահելիս նշանակալիորեն ավելի մեծ է, քան ջրրակրինը, և նա այնքան էլ ազահարար չի կլանում ողի խոնավությունը: Պահելու պայմաններն ընդհանուր առմամբ նույնն են, ինչ վոր ջրրակրի համար էլին:

Կալցիումի հիպոքլորիտը լուծվում է ջրում, փոքրիկ սուղակ թողնելով, վորը հեշտությամբ պղտորվում է և բավական յերկար չի նստում: Քլորակրի մասին ամբողջ ասվածը մետաղների մարդու հագուստի և մաշկի ծածկույթների վրա նրա արած ներգործության վերաբերյալ ևս առավել մեծ աստիճանով վերաբերում է և կալցիումի հիպոքլորիտին:

Իր դազահանող հատկություններով նա նման է ջրրակրին, բայց շնորհիվ ակտիվ ջրրի մեծ տոկոսի թՆ-ի հետ փոխներդործում է ավելի ուժգին, և նրա ծախսման նորմաները մի փոքր ավելի ցածր են լինում:

ԾԾՄՐԱԿԱՆ ՆԱՏՐԻՈՒՄ (ՍՈՒԼֆԻԴ)

Ծծմբական նատրիումն (սուլֆիդն) իրենից ներկայացնում է աղտաթխազույն գնդեր ծծմբաջրածնի հոտով: Տեխնիկական պրոզուկտը պարունակում է մոտ 60% ծծմբական նատրիում (սուլֆիդ): Նա լավ լուծվում է ջրում և սպիրտում, ընդվորում լավազույն կերպով լուծվելու համար խորհուրդ է տրվում՝ նախորդ մանրացնել այն (աչքերը հատուկ ակնոցներով պաշտպանելով): Սենյակի ջերմաստիճանում նա ջրում լուծվում է մոտ 250/0 քանակությամբ ըստ կշռի: Չրի տաքացմամբ նրա լուծելիությունը մեծանում է: Խոնավության և ջերմության ներգործությամբ ծծմբական նատրիումը (սուլֆիդը) դանդաղորեն քայքայվում է, ուստի պետք է այդ նյութը պահել լավ փակված յերկաթե թմբուկներում: Լուծույթները վատ են պահպանվում: Նրանք սաստիկ քայքայում են այն հազուադեպ, վորը բրդե նրբաթելեր է պարունակում: Վորոչ պայմաններում ջրային լուծույթները արագ դազահանում են խլրիտը և հաշտությամբ կիրառվում են լյուիզիտը և բրոմբենզիլցիլանիդը դազահանելու համար: Ծծմբական նատրիումի (սուլֆիդի) սպիր-

տային լուծույթը դադարեցնում է իսլրիտը, քլորպիկրինը, քլորացենոֆենոնը:

Իսլրիտի դոզը շիններով ողը վարակելուց պաշտպանելու համար ամերիկացիները խորհուրդ են տալիս վարակված հողը ծածկել ծծմբական նատրիումի (սուլֆիդի) 10/0-ային լուծույթով թրջած ավազի շերտով (1,5 սմ.): 1 մ² վարակված տարածություն վերահաշվելով՝ այդ մոտավորապես համապատասխանում է հետևյալ քանակություններին.

- ավազ 20 կգ (մի դւ.)
- ջուր 4 լ
- ծծմբական նատրիում (սուլֆիդ) . 0,04 կգ

ՆԱՏՐԻՈՒՄԻ ՀԻՊՈՍՈՒԼՅԻՏ

Ջրային հիպոսուլֆիտը կամ նատրիումի թիոսուլֆատը իրենից ներկայացնում է անգույն բյուրեղներ, վորոնք դյուրուկությամբ լուծելի յեն ջրում: 20⁰-ում նրա լուծելիությունը հասնում է 400/0 ըստ կշռի: Նա պետք է պահվի փայտե տակառներում կամ ապակե բանկաներում: Սողայի և ուտիչ նատրոնի հետ խառնուրդ տալով՝ ծառայում է քլորը, ֆոսգենը դադարեցնելու համար, իսկ տաք վիճակում նաև բրոմբենզիլցիանիդը:

ԱՄՈՆԻԱԿ

Ամոնիակը (կամ անուշադրի սպիրտը) սովորաբար կիրառվում է տաս տոկոսանոց կամ քսանհինգ տոկոսանոց ջրային լուծույթների ձևով: Նա շատ ցնդուն է, ուստի նրան պետք է պահել լավ խցանված շշերում և թունդ լուծույթների հետ աշխատելիս աշխատել հակամոնիակային հատուկ հակադադ համար:

Կիրառվում է քլորը, ֆոսգենը և դիֆոսգենը դադարեցնելու համար 1%-անոց ջրային լուծույթը շաղ տալու (ցանելու) ճանապարհով: Ամոնիումի քլորիդի և պղնձի մոնոքլորիդի հետ խառնուրդ տալով ծառայում է անխառնի ոքսիդը դադարեցնելու համար:

ՈՒՏԻՉ ՆԱՏՐՈՆ

Տեխնիկական ուտիչ նատրոնն (կաուստիկ) իրենից ներկայացնում է սպիտակ կամ աղտավարդագույն (յերկաթի ոքսիդներով աղտոտվելուց) կտրոններ, վորոնք շոշափելիս հեշտ փր-

վրում են: Ուտիչ նատրոնը սաստիկ խոնավություն և քաշում, ուստի և բաց սղում դրված պահին արագարար քայքայվում է: Նա լավ լուծվում է ջրում և սպիրտում: Ուտիչը և ուտիչին ուտիչ ներդրումով: Նրա հետ աշխատելիս անհրաժեշտ է աչքերն ակնոցներով պաշտպանել բեկորներ ու ցալքուններ ընկնելուց:

Ուտիչ նատրոնի լուծույթներն արագացնում են գրեթե բոլոր թՆ-ի քայքայումը: Կիրառվում է վորպես դադարեցնող նյութ կուրիտի, աղամսիտի և այլ արսենային թՆ-ի դեմ: Հիպոսուլֆիտի և սողայի հետ խառնուրդ տալիս դործ է անվում քլորը, ֆոսգենը և բրոմբենզիլցիանիդը դադարեցնելու համար:

ՍՈՂԱՆ

Սողան կամ նատրիումի կարբոնատը վաճառքի յե մանում սպիտակ նուրբ փոշու ձևով կամ վորպես թափանցիկ բյուրեղներ: Սողան լավ լուծվում է ջրում: Կիրառվում է հիպոսուլֆիտի և ուտիչ նատրոնի հետ խառնուրդ տալիս քլորը, ֆոսգենը, դիֆոսգենը, բրոմբենզիլցիանիդը դադարեցնելու համար: Մի քիչ ավելի պակաս եֆեկտով պիտանի յե նաև խառնուրդից դուրս:

ՅԵՐԿԱԹԻ ԱՐՋԱՍՊ

Յերկաթի արջասպը (կամ յերկաթի (2) սուլֆատը) իրենից ներկայացնում է կանաչավուն գույնի բյուրեղներ մածուցիչ համով: Լավ լուծվում է ջրում (1 մասը 0,5 մաս տաք ջրին): Վորովհետև բյուրեղներն սղում հողմահարվում են և ոքսիդանում, պետք է յերկաթի արջասպը պահել լավ խցանված սպանում:

Կիրառվում է ջրային լուծույթի ձևով (50 գ. 1 լիտրին) կապտաթթվից դադարեցնելու համար: Յերկաթի արջասպի վորխաբեն կարելի յե հենց նույն նպատակի համար ողտվել պղնձի արջասպով 70 գ. 1 լիտր ջրին քանակությամբ:

ԿԱԼԻՈՒՄԻ ՊԵՐՄԱՆԿԱՆԱՏ

Կալիումի պերմանգանատը կիրառվում է իսլրիտով վարակված մարդու մաշկը դադարեցնելու համար, յերկու-յերեք տոկոսանոց ջրային լուծույթի ձևով, ինչպես նաև մետաղե նուրբ

կերպով քննելը, վորպես հատուկ լուծույթ, գաղահանելու համար.

կալիումի պերմանգանատ	10 ր
մաքուր ացետոն	90 սմ՝
քացախական թթու	10 սմ՝

Լուծույթն անկայուն է, ուստի և հարկավոր է պատրաստել այն դործադրությունից անմիջականորեն առաջ:

ՆԱՏՐՈՒՄԻ ՍՈՒՆԻՍ

Նատրիումի սուլֆիան իրենից ներկայացնում է թափանցիկ բյուրեղներ: Նրա սպիրտային լուծույթը լիովին քայքայում է քլորպլիդրինը: Բլորպլիդրինի գոլորչները գաղահանման յենթարկվելու համար պիտանի յե նաև ջրային տաք հինդ տուկոսանոց լուծույթը:

ՏԱԲ ԶՈՒՐ ԵՅՎ ԳՈՒՈՐՇԻ

Տաք ջուրը 70—80° կամ գոլորչին (90—95°); վորոչ ճնշման ներքո հոսանքածև կիրառված, հանդիսանում են վորպես լավ միջոց կայուն թ՛Ն լվանալու և մետաղից, փայտից ու շինանյութերից պատրաստված ամենատարբեր ստարկաներ նրանցից գաղահանման յենթարկելու համար: Այդ դեպքում տեղի յե ունենում թունավորող նյութի տրոհումը՝ գործնականորեն անվնաս պրոդուկտների գոյացմամբ:

Ջրում յեռացնելու ճանապարհով կարելի յե բամբակե դործվածքը գաղահանել իսրիտից: Գոլորչին հատուկ կամերաներում կիրառվում է բրդե դործվածքները գաղահանելու համար: Յեռացնելու պահին դոյացող աղաթթուն չեղոքացնելու համար ջրին փոքր քանակությամբ սոդա յեն ավելացնում (1—2 0/0), իսկ գոլորչու հետ աշխատելիս ամոնիակ:

ՍԱՌՇ ԶՈՒՐ

Սառը ջուրը, յերբ նա փոշեցրվելով, մանրագույն ցալքունների և մատախուղի միճակին է հասցրած, ընդունակ է լուծելու այնպիսի թ՛Ն, ինչպես քլորը, ֆոսֆենը, դիֆոսֆենը և ուրիշն: Նուրբ փոշիացրած ջրի ջրային ծածկույթները ծառայում են վորպես միջոց թ՛Ն-ի ամպն արագությամբ ապակենորոնացնելու համար, վորովհետև ստեղծում են ողի ուժեղ փոթորկային հոսանքներ և ողափոխությանը նպաստում են կանգառման վայրերում:

Առաջները հիշատակված քիմիական նյութերի ջրային լուծույթները հանդիսանում են ողի գաղահանման հիմնական միջոցը վաստ ողափոխվող (վենտիլացիայի, յենթարկվող) շինություններում:

ՏԱԲ ՈՒ

Տաք ողն գլավիորեն արագացնում է դանազան մատերիայներից կլանված թ՛Ն-ի շողիացումը, և կարող է կիրառվել այն բոլոր դեպքերում, վորտեղ գոլորչին անպեսք է: Գաղահանման կամերաներում նա ողտագործվում է հաղուստի գաղահանման համար: Տաք ողը, հազենալով թ՛Ն գոլորչիներով, թունավոր է դառնում, ուստի գաղահանման այս յեղանակը կարելի յե կիրառել կամ բաց ողում, կամ հատուկ ողափոխության առկայությամբ:

ԼՈՒՆԻԶՆԵՐ

Մի ամբողջ շարք որդանական նյութեր լավ լուծում են իսրիտը, լյուելիտը և բրոմբենզիլցիանիդը: Այդ հատկությունը ծառայում է մատնանշված թ՛Ն-ին վարակված առարկաներից հանելու համար: Սակայն լուծիչները վնասազերծ չեն անում թ՛Ն, ուստի թ՛Ն հանելուց հետո իրենք են թունավոր հատկություններ ձևոք բերում և յենթակա յեն կամ վոչնչացման կամ վնասազերծման:

Վորպես լուծիչներ պրակտիկայում ողտագործում են հետևյալ նյութերը.

ա) նավթի և բենզինի խառնուրդը (1:1), կիրառվում է չլներով մետաղական մասերը մշակելիս իսրիտը լուծելու համար.

բ) ածխածնի տետրաքլորիդը—անգույն հեղուկ է, վորը յեռում է 770-ում և սառչում — 25°-ում: Նա անկիղելի և դրեթե անլուծելի յե ջրում: Լավ լուծում է ճարպեր, յուղեր, կաուչուկ և շատ թ՛Ն:

Իսրիտի մյուս լուծիչներից պեսք է հիշատակել սկիպիդաթը, սպիրտը, յեթերը, ացետոնը:

ԿԼՍՆՈՂ, ՆՅՈՒԹՅԵՐ

Վերը նկարագրված գաղահանող նյութերի բացակայությամբ կարող են ողտագործվել դանազան սորուն նյութեր, վորոնք կը-

լանում են հեղուկ, իսկ նրանցից մի քանիսը նաև գոլորշիա-
կերպ թն: Սրանց են վերաբերում.

ա) պարտեզի սովորական հողը, վորը մաղված և չորացրած
է ոգում.

բ) չոր մանր ավազը, իսկ խարխտի գոլորշիները համար,
ինչպես հիշատակվեց, թրջված՝ ծծմբական նատրիումի (սուլ-
ֆիդի) մեկտոկոսանոց լուծույթով.

գ) փայտի սղոցուք (թեփ), չոր կամ տոգորված ծծմբական
նատրիումի (սուլֆիդի) լուծույթով.

դ) ջարդած, իսկ ավելի լավ է ծեծած-փռվացրած փայտա-
ծուխ.

յե) չոր ջարդած կավ.

զ) տորֆի փշուք (փոշի):

1—1½ ալ շերտով վարակված առարկայի վրա անվելով,
այս նյութերը ներծծում են հեղուկ թն գլխավոր դանդվածը,
վորից հետո կարող են հեռացվել և վոչնչացվել:

Վորովհետև այս նյութերը ամենուրեք տարածված են և է-
ժան են, ապա նրանք կարող են կիրառվել վորպես ժամանակա-
վոր մեկուսիչ մատերիալներ թն-ի գոլորշիացումներից ողբ
պաշտպանելու համար: Սակայն այս միջոցները լիակատար դա-
ղահանումը չեն ապահովում:

ԿԻՉԱՆՆՈՒԹԵՐ

Կիզանյութերը պետք է լայն կիրառություն դառնեն բոլոր
անկիղելի մատերիալների դաղահանման համար, վորովհետև
բարձր ջերմաստիճանը (500⁰-ից բարձր) բավական յերկարատև
ներդործման ժամանակ հանդիսանում է ամենից առավել ապա-
հով միջոցն իսրիտը և դրեթե բոլոր հայանի թն քայքայելու
համար: Վայրի դաղահանման ժամանակ կիրառվում է «դյուրա-
վառ խառնուրդը», 80% նավթ, 20% բենզին:

Վարակված հողի մակերեսային դաղահանման համար կա-
բող են ամենաբարդագան կիզանյութ (դյուրավառ) թափվելու-
ներ ոգտադործվել՝ սղոցուք, տաշեղներ, մամուռ, տորֆի փըշ-
րունք, անխի մանրուք: Վերջիններս այրելու համար անհրաժեշտ
է նախորդ նրանք չորացնել և տոգորել կամ թրջել վերահիշյալ
դյուրավառ խառնուրդով:

Վարակման փոքր ոջախների ժամանակ (առանձին ձաղար-
ներ) կարող են փայտից և ջախից խարույկներ դարսվել: Այս

դեպքում պետք է ապահովվեն բոլոր անհրաժեշտ հակահրդեհա-
յին ձեռնարկումները— հիշտ այնպես, ինչպես և կիզանյութեր
կիրառելու բոլոր դեպքերում:

Մետաղական կերտվածքներ, բետոն, աղյուս, վորոշ պայ-
մաններում ասֆալտ, կրակով դաղահանման յենթարկելու համար
կարելի յե ոգտադործել դողիչ լամպերի կամ հատուկ բոցա-
հարների բոցը:

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԳԱԶԱՀԱՆՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Տեխնիկական միջոցները ծառայում են դաղահան նյութերը
վարակված առարկաների վրա հավասարաչափ, արագ և տնտե-
սորեն անելու համար կամ թն մեխանիկորեն հեռացնելու հա-
մար: Գաղահանման տեխնիկան ոգտադործում է ամենաբարդա-
գան միջոցներ: Բնակելի տան դաղահանման աշխատանքների
ժամանակ պետք է ձգտել ոգտադործելու բոլոր առկա միջոց-
ները՝ ավտոտրանսպորտը, ձյունահալուկները, բաղնիքները,
մեխանիկական լվացքատները, կաթսային դրվածքը, դողիչ լամ-
պերը, կաշե պոմպերը փողոցները ջրելու համար, ներկանետնե-
րը և այլն:

Մյուս կողմից ցանկալի յե, վոր հատուկ միջոցները կիրա-
ռություն դառնեն իրենց համար նաև խարդո ժամանակ: Որի-
նակ ՎԴՊ—1 մայթերի վրա ավազ ցանելու համար, քրոակիեր-
հականեխման և լվացքի համար և այլն: Այդ հանգամանքը,
տեխնիկական զինվածության մեծացումից և միջոցների տնտե-
սությունից դատ, սաստիկ դյուրացնում է այն կադրերի պատ-
րաստությունը, վորոնք կարողանում են վարվել դաղահանման
միջոցների և դործիքների հետ:

Գաղահանման տեխնիկական միջոցները կարելի յե լոմբերի
յենթարթանել ըստ նրանց կիրառման ոբյեկտների բնույթի:
Այդ ոբյեկտները կարող են լինել վայրը և ճանապարհները,
չինարարական կառուցումները և տեխնիկական սարքավո-
րումը,

ողբ,
հաղուստը, վոտանմանը և տնային կենցաղի փափուկ ի-
րերը,

ջուրը և սննդամթերքները:

ԶՆՈՆՍԱՐ ԳԱԶԱՀԱՆՄԱՆ ԳՈՐԾԻՔ ԿՒՊ-1.

ՆՇԱՆԱԿՈՒՄԸ ՅԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՎԴՊ-1 նշանակված է կայուն թՆ-ով վարակված փոքրիկ տեղամասերի, մայթերի, անցքերի դադահանման համար: Գազահանումն իրագործվում է հավասարաչափ կերպով քլորակիր, կալցիումի հիպոքլորիտ կամ մի շարք մեկուսիչ մատերիալներ (ավազ, հող, սղոցուք (թեփ), վորոնք թրջված են ծծմբական նատրիումի (սուլֆիդի լուծույթով) ցանելու միջոցով:

Գործիքը իրենից ներկայացնում է մետաղե տուփ (կողով), վորը հաստատված է յերկանիվ քարչի վրա ծալալոր, (չերտազարգված), թմբուկով: Տուփը բեռնավորվում է սորուն մատերիալով:

Գործիքի հիմնական տեխնիկական հատկաբյուցուցները


- Դատարկ գործիքի քաշը 53 կգ
- Քլորակրի տարողութունը 55 կգ
- Գործիքի բարձրութունը հավաքված դրուժյամբ, 82 սմ
- Քարչի լայնութունը 118 սմ
- Գազահանվող շերտի լայնութունը մի շրջման ժամանակ մոտ 90 սմ
- Գազահանվող շերտի յերկարութունը մոտ 140 սմ
- Գազահանվող շերտի ընդհանուր տարածութունը մոտ 125 քառ. մ.
- Չոր քլորակրի շաղ տալու խտութունը . . . 300—400 գ 1 մ²-ին նոնավ » » . . . 180—200 գ 1 մ²-ին
- Յերթային դրուժյունից մարտականի փոխադրելու ժամանակը 0,5 րոպե
- Վերալցման (վերալցքի) արդուժյունը . . . մոտ 1 րոպե
- Շարժման արագութունը դադահանման ժամանակ 80—90 քալ 8 րոպե
- Գործիքի դատարկելու ժամանակը մոտ 5—6 րոպե
- Գործիքը սպասարկվում է յերեք հոգու կողմի հաշվով:

Գործիքի կառուցվածքը

Գործիքը (նկ. 6) բաղկացած է տուփից (A) դադահան մատերիալները դետեղելու համար, յերկանիվ քարչից (B) թրմ-

բուկով, խողանակից (B), ուղղիչ շրջանակից՝ բռնակով (D) և պատվանդանով (E), ոժանդակ իրերի արկղից (Մ) և յերկու նետիչ վահանակներից (K):

Տուփը (A) իրենից ներկայացնում է պրիզմատիկ ձևի մետաղե ռեզերվուար (պահեստարան), վորն ունի վերին նետիչ կափույր (Ճ) և վարի նետիչ մաս (K), վորպիսիք տուփի հետ միացած են հողակապերի միջոցով: Վերին նետիչ կափույրը կոճկվում է մի ձողիկի վրայի անդակների միջոցով, վորն ամրացրած է տուփի վերին յեղրին՝ նրա հետևի պատի մոտ: Վարի նետիչ մասը կոճկվում է այն մղակների միջոցով, վորոնք



Նկ. 6. ՎԴՊ-1. կառուցվածքի սխեման

դանվում են տուփի առջևի պատի վարի յեղրի մոտ: Տուփի ներքևում կողքի այն մղակներում, վորոնք ամրացրած են տուփի կողքի պատերի արտաքին կտրվածքին, կիսակլոր կտրուքներ են արված, ասես թե սոնակալների վերին մաս հանդիսանալով առանցքի համար: Հենց այդպիսի կտրուքներ կան նաև վարի նետիչ մասում. այս կերպ դոյացած բացվածքների միջով անցնում է թմբուկի առանցքը:

Գործիքի «չարժընթացը» բաղկացած է առանցքից, վորի վրա ամրացրած է թմբուկը, և յերկու անիվներից: Առանցքի ձախ ծալրին մի բացվածք կա գործիքի դործարկման նպատակով մեացնելիս յերթիքը մեջը դնելու համար: Թմբուկը շինված է ծալբավոր յերկաթից: Անիվները յերկաթե յին: Չախ անիվի ախանույր բացվածք ունի յերթիքը մեջը դնելու համար: Յերթիքի մեկ

ծայրը կոտորած և ողի ձևով, իսկ մյուսը հողակապային մի-
ացման ուղնությամբ ազատորեն կորանում և 90°-ով, մի հան-
գամանք, վորը բացառում է յերկթի կորստյան հնարավորու-
թյունն աշխատանքի ժամանակ:

Սողանակը նախանշվում է թմբուկը կոչող քլորակրից մաք-
րելու համար: Նա շինված է պողպատե լարի առանձին փնջե-
րից, վորոնք ամրացած են յերկաթե յերկու ձողերի արանքում:
Ձողերը ծայրերին ունեն գառնուկային պտուտակներ խողանակա-
կալների վրա ամրացնելու համար: Գառնուկները հետ պտուտա-
կելիս խողանակն ազատորեն առաջ է շարժվում խողանակալի
ազույցներով, մի հանգամանք, վորը թույլ է տալիս փոխելու
խողանակն անսարքությունների ժամանակ, ինչպես նաև կար-
գավորելու նրա հպումը թմբուկի հետ:

Առջևի և հետևի վահանակները նախանշված են դուրս ած-
վող փոշենման նյութերը քամու միջոցով ցիրուցան արվելուց
պաշտպանելու համար:

Ապարատները տեղափոխելիս վահանակները մղվակներով
ամրացվում են տուփի պատերին, իսկ աշխատանքի պահին դե-
պի վար են նետվում:

Գործիքային այն արկղի մեջ, վորը դամված է տուփի առ-
ջևի պատին, պետք է գտնվեն՝ մուրճ, փայտե դավաղան, դոր-
ծիքը կալնվելիս խառնելու համար, յերկու հողակապային յե-
րթներ և հնոտի՝ գործիքը սրբելու համար:

Գործիքի աշխատանքը հիմնված է այն բանի վրա, վոր
թմբուկը շարժվելիս պտտվելով, իր ծալքերով (յելուտաներով)
վերցնում է դուրս ցանվող մատերիայը և արտացանման բաց-
վածքից թափում է դաղահանվող մակերեսի վրա՝ գործիքի ներ-
քևի մասից: Արտացանման հավասարաչափությունը ձեռք է
բերվում ծալքավոր թմբուկի և խողանակի ուղնությամբ:


Նորմալ կերպով գործիքից դուրս է թափվում մատերիայի
90 %, վորից հետո պահանջվում է նրա զտումը և վերա-
լցումը:

Գործիքի քանդումը

Գործիքի քանդումը (նկ. 7) տեղի յե ունենում աշխատանքից
հետո դաղահանման յենթարկելու համար կամ թե չե այն մաք-
րելու և նորոգելու համար: Ըստ հրամանի՝ «քանդել գործիքը»,
կատարվում է հետևյալը.

առաջին համար մարտիկը բարձրացնում է առջևի (նախա-
պահպանական) վահանակը և ամրացնում է այն մղվակի վրա,
կոճկում է տուփի վարի նետիչ մասի մղվակները շարժընթա-
ցը փոխում է «աշխատանքայինից» «դատարկ շարժընթացի».

յերկրորդ և յերրորդ համարները բարձրացնում են հետևի
նախապահպանական վահանակը և ամրացնում են մղվակի վրա,



Նկ. 7. Վ.Գ-1 քանդված դրությամբ:

տուփը հանում են շարժընթացից և բարձրացնում են այն, ա-
ռաջին համարը դուրս է հրում շարժընթացը տուփի տակից,
յերկրորդ և յերրորդ համարները իջեցնում են այն դետնի վրա
և կոճկում վարի նետիչ մասի մղվակները:

Նախապատրաստուքյուն՝ մարտական աշխատանքի

Աշխատանքի նախապատրաստության գործիքն ասելով հա-
կացվում է նրա զննությունը և լցանքը: Լցանքն իրագործվում
է հետևյալ կերպով.

առաջին համարը բաց է անում տուփի վերին կախույրը և
հետևում, վորպեսզի լցանքի պահին նրա մեջ զնդեր, թուղթ և
այլ առարկաներ չընկնեն.

յերկրորդ և յերրորդ համարները մոտ են տանում դաղահա-
նող նյութը, բաց են անում տարան և կատարում գործիքի լը-
ցումը: Գլորակիր 50 կգ. անոց տարայով մատակարարելիս լը-
ցումը կատարվում է անմիջականորեն տակառիկից: 100—250
կգ. տարայի ժամանակ—թիակներով (թիկերով):

Վայրի դադահանման ժամանակ սպասարկող հաշվարքը գործում է հետևյալ կերպով.

առաջին համարը աշխատում է գործիքի հետ.

յերկրորդ և յերրորդ համարները մոտ են տանում մատերիայը և թիակներով լցնում են գործիքը գազահանվող շերտում:

Յերկու շրջումից հետո յերկրորդ համարը փոխարինում է առաջինին, իսկ հետագա յերկու շրջումից հետո յերրորդ համարը փոխարինում է յերկրորդին:

Յեթե առաջին լիարեանումը կատարվել է դադահանված բազայում, ապա լիարեանված գործիքը փոխադրվում է գազահանման վայրի մոտ, «դատարկ» շարժենթացով («խաբատոյ»):

Աշխատանքի պահին, վորպես կանոն, գործիքն իրենից առջև է քշում: Գործիքը փոխադրող համարը ամբողջ ժամանակ պիտու է շաղ տալու խողովակներ: Ընդհատումների դեպքում գործիքը կանգնեցնում են պատահարները վերացնելու համար:

Գազահանման պահին անհրաժեշտ է պահպանել շարժման արագության և յերկարության նորմաները գազահանվող շերտում: Ամբողջ լցանքը պետք է դուրս թափվի 125 մ² տարածություն վրա:

Նայած գազահանվող շերտի ընդհանուր յերկարությանը, գործիքի լցանքի թափումը կատարում են 1—2—3 շերտերի վրա. այդ դեպքում, յուրաքանչյուր հաջորդ շերտը պետք է նախորդ շերտից ծածկի 10 սմ-ով:

Մի քանի գործիքների միաժամանակյա աշխատանքի պահին յուրաքանչյուր հաջորդ գործիքի շարժումն սկսվում է առաջինը 10 քայլով հեռանալուց հետո (նկ. 8):


Այլից փչող քամու ժամանակ շարժումն սկսում է ձախաթեվյան գործիքը, իսկ ձախից փչող քամու ժամանակ— աջաթեվյան գործիքը:

Խնամքը և պահելը

Ամեն անգամ ոգտագործելուց հետո գործիքը դրսից և ներսից մաքուր լվանում են ջրով և լավ սրբում չորացնում են լաթով: Քլորակրի կամ հիպոքլորիտի պատերին կպչած զնդիկները պետք է խնամքով հեռացվեն և լվացվեն: Յեթե խողանա-

կը շատ է աղտոտված, ապա պետք է պատելով դուրս հանել և մաքրել:

Վարակված տեղամասում աշխատանքն ավարտելուց հետո գործիքը դադահանում են՝ նրան սպասարկող համարները կաթե այն ուղարկում են տեղամասային դադահանման հրապարակ: Գազահանումը կատարվում է քլորակրի թանձր շփոթ կլետելու միջոցով 30 բույեյով: Դրանից հետո գործիքը խնամքով լվանում են ջրով և սրբում ու չորացնում են լաթով: Առանձնապես խնամքով դադահանվում են անիլները, հենարանները և ուղղություն տվող շրջանակները:



Նկ. 8. Մի քանի ՎԴԳ-1 աշխատանքների սխեմա:

Պահեստարանում պահելիս գործիքները պետք է պահպանվեն լիակատար մաքրության մեջ, վերոհիշյալ գործիքներն անհրաժեշտ է հավասարապես ներկել պահպանական յուղաներկով դրսից և ներսից:


ՄԱՂԱՊԱՏԳԱՐԱԿՆԵՐ

Մագապատգարակները նախանշված են փոքր տեղամասերի դադահանման համար, դլխավորապես, անհավասար վայրի (ձանապարհների խողոններ, կանալներ և այլն), ինչպես նաև

ձաղարները և այնպիսի վայրերի, վորոնք բաց են թողվել գաղահան դործիքների կողմից:

Գործիքի կառուցվածք

Մաղապատգարակները— փայտե արկղ են հետ ծալովի բռնակներով: Արկղն ունի հետ ծալովի կափույր, վորն ամրացվում է կողքի պատին յերկու ճարմանդներով, և ծակոտկեն է հատուկ թերթավոր յերկաթից, վորը պատերին ամրացրած է պողոսակներով: Բռնակները կողքի պատերին ամրացրած են հեղույններով: Իոխադրության ժամանակ բռնակները դարսում են արկղի ներսում, աշխատանքի համար— հետ են ծալում զեպի դուրս և ծալովի փայտե ձողիկի կամ ճարմանդների ոգնությամբ ամրացնում են: Կողքի պատերից մեկի վրա բրեզնտե կամ կաշվե բռնակ կա դործիքի փոխադրության համար: Մաղապատգարակները ներկված են պաշտպանական յուղաներկով: Նրանք կարող են սեփական միջոցներով պատրաստվել տեղերում (նկ. 9):



նկ. 9. Մաղապատգարակների աշխատանքի մեջ:

Գործիքի հիմնական հատկությունները

Կշիռը	7 կգ
Աշխատանքային տարողութունը քլորակրով	20 կգ
Գործիքի արկղի բարձրութունը	18 սմ

Գործիքի յերկարութունը	75 սմ
Գործիքի լայնութունը	50 սմ
Մաղի բացվածքների տրամագիծը	0,5 սմ
Բացվածքների միջի տարածութունը (հեռավորութունը) 1,5 սմ	
Այն տարածութունը, վորը գաղահանվում է մի լիաբեռնմամբ արտացանման միջին խտության ժամանակ	50 մ ²
Գտտարկման ժամանակը	3 րոպ.
Լիաբեռնման ժամանակը	1 րոպ.

Արտացանման խտությունը կարգավորում են շարժման աբազության փոփոխման ճանապարհով և դործիքի ցնցումների քանակությամբ:

Մաղապատգարակներին սպասարկում են 4 հողի, պաշտպանական հագուստ և հակազգեղ հագած. առաջին և յերկրորդ համարներն աշխատում են պատգարակների հետ, յերրորդ և չորրորդ համարները— մատուցողներ են:

Գործիքի ներգործութունը և նրա սպասարկումը

Աշխատանքից առաջ դործիքը զննում են, ստուգում են բռնակների ամրացման հուսալիությունը և մաղի մաքրությունն ու դործիքը զննում են վար (գետնին):

Ըստ հրամանի «լցրու», յերկրորդ համարը բաց է անում կափույրը, հետ է ծալում և ամրացնում բռնակները. լիաբեռնումն ավարտելուց հետո փակում և կոճկում են կափույրը:

Յերրորդ և չորրորդ համարները դործիքը լցնում են քլ. լորակրով անմիջականորեն 50-լիտրանոց տակառիկից կամ առավել խոշոր տարայից՝ թիերով:

Առաջին համարը հսկում է, վորպեսզի լիաբեռնման պրոցեսում դործիքի մեջ քլորակրի խոշոր գունդեր և կողմնակի առարկաներ (ծղաններ, միջադիր թղթի կտորներ և այլն) չընկնեն:

Աշխատանքի ժամանակ առաջին և յերկրորդ համարները կանգնում են բռնակների արանքում իրար դեմ, ձեռքները պարզած վերցնում են բռնակները և բարձրացնում դործիքը:

Կրի արտացրումը (չաղ տալը) կատարում են մաղապատգարակների հորիզոնական ցնցման ճանապարհով:


Քամու ժամանակ պետք է մաղապատգարակները պահել վորքան հնարավոր է գաղահանվող տարածությանը մոտիկ, վորպեսզի նվազեցվի քլորակրի փոշեցրումը:

Աշխատանքից հետո գործիքն ազատում են քլորակրի մնացորդներից և սրբում են փալաններով: Մաղը լվանում են ջրով և սրբում են մինչև չորանալը:

Բացի վերը թվարկած հատուկ գործիքներից վայրի դադահանման համար կարող են այնպիսի սպարառոններ ոգտադործվել, վորոնք խողաղ ժամանակ կիրառվում են մայթերը և սալահատակները մաքրելու համար: Նշենք նրանցից հետևյալները:


**ՋԵՌՔԻ ԱՎԵԼՅԱԾՈՒ ՄԵՔԵՆԱՆԵՐ, ՋԵԱՆԱԼՈՒԿՆԵՐ
ՅԵՎ ԱՅԼՆ**

Ջեռքի ավելածու մեքենաները, վորոնք կիրառվում են մայթերը (նկ. 10), բակերը և փոքրիկ անցատեղերն ավելելու համար, կարող են հաջողությամբ ոգտադործվել քլորակրային շիլան վորպես վերասրբելու, այնպես և աշխատանքը վերջացնելուց հետո հեռացնելու համար:



Նկ. 10. Մայթի ավելածումը ձեռքի մեքենաներով:

Ավելածու մեքենան (նկ. 11) մաքրում է աղբը դեպի ցանկացած կողմն ըստ շարժման ընթացքի. ոժտված է շաղ տալու սարքով:



Նկ. 11. Ջեռքի ավելածու մեքենա:

ՄԵՔԵՆԱՅԻ ԻՐԱՆԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԽԱՏԿՈՒՅՈՒՆՆԵՐ

Ավելածվող շերտի լայնությունը	900 մմ
Շարժման արագությունը ավելածելիս	3 կմ/ժամ
Պողանակի արամագիծը	300 մմ
Պողանակի յերկարությունը	1040 մմ
Բաքի տարողությունը	35 լ
Բաքի մեջ առկա այն ճնշումը, վորն ստեղծում է ձեռքի պոմպը (նաստը)	3 մթն. (ատմ.)
Արտադրողականությունը չոր աղբի ժամանակ	3000 մ ² /ժամ
Պողանակի և ջրի կշիռը միասին	80 կգ
Հարկ յեղած հզորությունը	1 մարդ

Չնահալուկներ: Մեծ մասամբ ձնահալքն ավելի եժանե է նրստում ձյունը քաղաքից դուրս արտահանելուց, և շատ տնային կառավարչություններ ձնահալուկներ ունեն: Նրանք պետք է ոգտադործվեն վարակված ձյունը վոչնչացնելու համար: Գոյություն ունեն ձնահալուկների տարբեր սխտեմներ: Նրանց սովորական արտադրողականությունը մոտ 30 մ²/ժամ է: Գազահանման ժամանակ հալած ձյան ջուրը խառնում են քլորակրի հետ և իջեցնում առունների մեջ (ջրհոսարանների):

Յերկաթե քիերը— սովորական չափերի (315+295 մմ), առանց յեղբերի, բռնակներով, 1,4 մ լայնությամբ և 40 մմ տրամագծով կիրառվում են քլորակիրը ցանելու կամ վարակված հողի շերտը վերցնելու համար: Մի ժամյա արտադրողա-

կանությունը քլորակիրը ցանելիս հավասար է 150 մ-ին: Հողի շերտը վերցնելիս (8—10 սմ)— հավասար է 15 մ²:

Փայտե քիեր— մեծերը՝ վարակված ձյունը քերելու համար: Արտադրողականութունը— 80 մ² մի ժամում:

Շարժակը, ռետինե շերտիկով կպցրած, կիրառվում է քլորա-կրային այն շիլան սրբելու համար, վորը կիտած է ասֆալտով ծածկված հրապարակիկներին և մայթերի վրա: Գաղահանման պրոցեսը վերջացնելուց հետո հենց այդ շարժակի և ջրի ոգնությամբ շիլան վիացվում, կեղտաջրի խողովակներն է մղվում: Շարժակի յերկարութունն է 820 մմ, լայնութունը— 80 մմ, հաստութունը 7 մմ: Ռետինի շերտը դառնում է հանովի-դնովի:

Չեռֆի խոզանակները 470 մմ յերկարությամբ, 1,8 մ բլու-նակով կիրառվում են քլորակրային շիլան սրբելու և վիանալու համար:

Պարտեզի ցնցուղները՝ ցլնկապատած, 20 լիտր տարողությամբ, կիրառվում են ցանած քլորակիրը թրջելու, կիզանյութը կամ քլորակրային շիլան վողողելու համար: Վերջին դեպքի համար պետք է հատուկ մաղ ունենալ մեծացրած բացվածքներով: Մի ժամյա արտադրողականութունը ջրով կամ դյուրա-վառ խառնուրդով վողողելիս— 300 մ²: Քլորակրային շիլան վողողելիս— 150 մ²:

Բացի դրանից, ոգտադործվում են ալեղներ, ձեռնասայակներ, դոզավոր թիակներ, պատղարակներ և ինվենտարներ, վորը կիրառվում է փողոցները մաքրելու համար:

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՈՒՄՆԵՐԸ ՅԵՎ ՏԵՆՆԻԿԱԿԱՆ ՄԱՐՔԱՎՈՐՈՒՄԸ ԳԱԶԱՀԱՆԵԼՈՒ ՏԵՆՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Շինարարական կառուցումների դաղահանումն իրագործվում է սովորաբար ուղղաձիգ մակերեսների վրա քլորակրային շիլա քսելով: Այդ բանի համար կիրառվում է կամ «Պիոներ» սրբա-կիչը¹, կամ աշխատանքը կատարվում է ձեռքով՝ խողանակներով և վրձինով: Մետաղե ջներկված կառուցումները դաղահանվում

1. «Պիոներ» սրբիչը նախանշված է ուղղաձիգ և այլ մակերեսները քիմիական լուծույթներով և քլորական շիլայի տիպի միխանիկական խառնուրդներով սրակելու ոգնությամբ դաղահանելու համար:

են՝ դրանք ՐԴՊ—1 (տես ստորև)—ից լուծույթներով վիանալու, գողիչ լամպերով և այլ ապարատներով մշակելու ճանապարհով:

ՄԵԶԻՆ ԿՐՎՈՂ ԳԱՂԱՀԱՆՄԱՆ ՐԴՊ-1 ԳՈՐԾԻՔԸ ԴԻԵՐԸ Ե ԻՐԱՄԱԿԱՆ ԽԱՏԿՈՒՔՅՈՒՆՆԵՐԸ

Մեջքին կրվող դաղահանման «ՐԴՊ—1» դործիքը նախա-նշվում է կայուն թՆ-ով վարակված առարկաները լուծիչներով վիանալու ճանապարհով դաղահանելու համար և փակ փոքր շիլա-թյուններում թունավորված ողը չեղոքացնող լուծույթները փո-ջեցրելու ճանապարհով դաղահանելու համար: «ՐԴՊ—1» կիրառ-վում է պարտիզա-բանջարանոցային տնտեսության մեջ թիերը և ցածր ծառերը՝ դյուղատնտեսական վնասատուների դեմ պայ-քար մղելու նպատակով՝ սրակելու համար:

Գործիքն իրենից ներկայացնում է մեջքին կրելու մետաղե ռեզերվուար, վորը լցվում է համապատասխան այնպիսի հեղուկով, վորպիսին դուրս է նետվում ռետինե կաշիփողի և փոշեցիր ծայ-րակալով ոժտված մետաղե ջրհան մեքենայի միջով: Դուրս նետ-վելը տեղի յե ունենում ողի ճնշման ներքո, ընդվորում հեղու-կը հատուկ ճնշիչ հարմարանքի ճանապարհով սեղմում է ողը, իսկ հարմարանքն ինքը ներգործության մեջ է դրվում ձեռքով:

ԳՈՐԾԻՔԻ ԻՐԱՄԱԿԱՆ ՄԵՅՈՒՆԻԿԱԿԱՆ ԽԱՏԿՈՒՔՅՈՒՆՆԵՐԸ


Դատարկ գործիքի կշիռը	7 կգ
Հանդերձած գործիքի կշիռը (հեղուկի տեսակարար կշռին համեմատ)	16—28 կգ
Լիակատար տարողությունը	13,6 լ
Աշխատանքային տարողությունը	12 լ
Բարձրությունը	0,39 մ
Լայնությունը	0,35 մ
Միջաձիգը	0,18 մ
Փոշիցման անկյունը	70—80°
Հոսանքի յերկարությունը	մինչև 2,5 մ
Դատարկման ժամանակը	11 րոպ.
Վերալցման արագությունը	1,5—2 րոպ.
Գործիքն սպասարկվում է 1 մարդով:	

«ՐԴՊ—1»-ի կառուցվածքը և ներգործությունը

«ՐԴՊ—1» բաղկացած է ռեզերվուարից, սեղմելու դրանաձև կամերայից, ճնշիչ հարմարանքից և ռետինե կաշիփողից՝ մետա-ղե ջրհան մեքենայով, վորը ծայրին փոշեցիր ունի:

Ռեգերվուարը (նկ. 12) (A) ունի լայն անցք, ուժոված ցանցով (3), 19-րդ հեղուկը Ֆիլտրերու համար: Նա քիփ կերպով փակվում է մի կափուկրով (H), վորը ողածն ուեաինն միջադիր և բոնակ (K) ունի:

Ռեգերվուարի ներսում դետեղված են սեղմելու դլանածն կամերան (B) և ճնշիչ հարմարանքի մանրամասերը: Ռեգերվուարի ներքևի մասում մի բացվածք կա, վորի միջով անց է կացրած ծնկածն լծակի (B) ծայրը: Ռեգերվուարի հետևի պատին ամրացրած են փոկեր դործիքը մեջքին կրելու համար:



Նկ. 12. Մեջքին կրվող գազանանման գործիք (ԲԴՊ-1):

Սեղմելու դլանածն կամերան (ողային կափարիչ— B) ծառայում է փորպես ողային ճնշման սեղերվուար: Հեղուկը, մըտնելով կամերան, սեղմում է նրա միջի ողը, ստեղծելով հավելյալ ճնշում, վորը դուրս է մղում հեղուկը յեղքի բացվածքի մեջ: Կամերայի ծավալն է 1,4 լ.:

Ճնշիչ հարմարանքը (պոմպը) ծառայում է հեղուկը սեղերվուարից սեղմող կամերան մղելու համար: Նա բաղկացած է ուեաինն յերկու կափարիչներով (M) և (H)՝ ուժոված տուփից (Y), ուեաինն դիաֆրագմայից (X) և բոնակավոր ծնկածն

լծակից (B): Բոնակը դեպի վար էլեցնելիս ուեաինն դիաֆրագման հետ է քաշվում, և սեղերվուարից (A) հեղուկը տուփի (Y) վերին մասն է թափվում կափարիչի (M) միջով: Բոնակը բարձրացնելիս դիաֆրագման հեղուկը կափարիչի (H) միջով սեղմում է կամերան և դուրս մղում: Ընդամին կափարիչը (M) փակվում է:

Ռեաինն կաշիփողը (չլանդը) շտուցերի (II) միջոցով միացած է սեղմող կամերայի յեղքի բացվածքի հետ և ամրացրած է խամութիկով: Մյուս ծայրին ամրացրած է ջրհան մեքենա և նմանապես ամրացրած է խամութիկով: Ջրհան մեքենան (բըրանդսպոյտը) մեկ ծայրին փակելու ծորակ (C) ունի և մի ցանց, վորի միջով հեղուկը մի անգամ ևս Ֆիլտրվում է: Ջրհան մեքենայի մյուս ծայրին պտուտակված է փոշեցիրը (IO): Փոշեցիրներն ունեն յեղքի բացվածքներ 1,5 և 2 մմ տրամագծերով:

ԲԴՊ-1 քանդումը

Գործիքը փոխադրելու և տեղափոխելու համար ծնկածն լծակն անջատում են սեղերվուարից: Ռեաինն մանրամասնիկները փոխարինելու և գործիքը մաքրելու համար հանում են դիաֆրագման (Y) տափողակներով, հետ դարձնելով ձողեր-փակիչները (Փ), ալյուսհեռ պտուտացնում են կոթածողի (X) պտուտակները և հանում վերին տափողակը և դիաֆրագման:

Կափարիչների փոխարինումը կատարում են դիաֆրագման հանված ժամանակ, պտուտացնում են կափարիչների պտուտակները և կափարիչները հանում: Հավաքումը կատարվում է նըկարադրածին հակառակ կարգով: Կափույրի միջի ողային միկարիքը փոխելու համար միջադիրը հետ են քաշում և հանում, սակայն նորը ձգում և հաղցնում են կափույրի վարի տափողակի միջով:

Աշխատանքը գործիքի հետ

Գործիքը դնում են հողի վրա և ստուգում, թե արդյոք փափ է փակելու ծորակը, թե վո՛չ: Ալյուսհեռ բաց են անում լայն բացվածքի կափույրը, վորի համար կափույրի բոնակը շրջում են 180°-ով և դեպի վեր բարձրացնում: Լայն բացված-

քից դուրս են հանում ցանցը, մաքրում են այն և վերստին մեջը դնում: Դրանից հետո գործիքը լցնում են պահանջած հեղուկով 12 լիտր ծավալով: Բացվածքը փակում են կափուլը, կափուլի բռնակը շրջում են 180°-ով և վար իջեցնում: Բռնակին իջեցնելիս ռետինե ողային միջադիրը պնդորեն հարում է բացվածքի շրջանակին:

Համոզված լինելով, վոր բացվածքը պնդորեն փակված է, գործիքը դնում են մեջքին: Աշխատանքն սկսելու համար ձախ ձեռքն են առնում ջրհանը (բրանդարոյտը), իսկ աջ ձեռքով կատարում են բռնակի 5—6 ճոճումներ, վորից հետո բաց են առնում փական ծորակը:

Աշխատանքի ժամանակ անհրաժեշտ է ասարատի փոշեցիքը բռնել կամ դեպի վար, կամ իրենից, 15—20 սմ հեռավորության վրա դադարեցնել մակերեսից:

Ուղղաձիգ մակերեսները մշակելիս պետք է ըլսցումը կատարել վերից վար: Աշխատանքի համար բավական է ճոճել 15—20 անգամ մի րոպեյում:

Վորպես գործիքի դատարկման հատկանիշ ծառայում է դեմադրութայն բացակայութունը լծակը ճոճելիս:

ԲՊ-1 հետ աշխատելիս պետք է զգուշանալ կերտին և բենզին լուծիչների ցալքունները հագուստի վրա ընկնելուց, ինչպես նաև թույլ չտալ մոտիկուց աշխատանք կատարել կրակի հետ:

ՊՈՄՊԵԱ

«Պոմոնա» սրակիչը (նկ. 13) գործադրվում է դադարահանման լուծույթներով ծառեր, կույտեր, թումբեր, փայտակույտեր և այլն սրակելու համար: Սրակիչները պատրաստվում են յերկու չափսերի. առաջինները ավելի մասսայական և հզոր, վորոնց մխոցի տրամագիծն է 6 սմ, մյուսներն ավելի թեթև՝ 5 սմ տրամագծով: «Պոմոնան» խիստ պարզ կառուցվածք ունի:


Ապարատի պոմպը բաղկացած է ողային խուփից և դլանից, վորոնք զուգահեռաբար միացած են հաղորդիչ խողովակով:

Պոմպը պարզ ներգործութուն է յերկու կափուլներով ներծծող, վորը զետեղված է պոմպի դլանի հիմքում կափարիչային տուփի մեջ, և ճնշիչ կափարիչով, վորը զետեղված է ողային խուփի հիմքում նմանապես կափարիչային տուփի մեջ: Կափուլները— պնակային կոնուսաձև ծայրերով և ուղղիչ կո-

դերով— շինված են պղնձից: Պոմպի լծակը— կոացրած, ձուլված չուգունից կամ կուելի յերկաթից— մի ծայրով ամրացրած:

ե այն կանթերին, վորոնք գտնվում են ողային խուփի կափուլում:

Ողային խուփի դլանի մեջ տեղում նրա արտաքին կողմից առանցքի վրա խառնիչի բերաններն են ամրացրած: Բացի դրանից, այդ թիարերանները հողավորված են պոմպի մխոցի ձողի հետ: Այսպիսով ճոճումների ժամանակ լծակի բարձրացման հետ նույն ժամին բարձրանում է պոմպի մխոցը, վորի հետևանքով խառնիչի թիարերանները շարժման մեջ են դրվում:



Նկ. 13. «Պոմոնա» սրակիչը

Ապարատի աշխատանքը

Լծակը բարձրացնելիս նրան ամրացրած վահանակը նմանապես բարձրանում է, ընդամին բարձրանում է և պլունժերը: Պլունժերի բարձրացմամբ պոմպի դլանում դատարկ տարածութուն է գոյանում: Մթնոլորտային ճնշման ներգործությամբ հեղուկն այն տակառից, վորի մեջ ամրացված է պոմպը, բարձրացնում է ներծծող կափարիչը և լցնում պոմպի դլանը:

Լծակն իջեցնելիս պլունժերն իջնում է և ճնշում գլանի մեջ գտնվող հեղուկը: Հեղուկի ճնշման ներքո ներծծող կափարիչը (վորը զետեղվում է պոմպի դլանի հիմքում) փակվում է, իսկ ճնշիչ կափարիչը բացվում է ողային խուփի կողմը: Ծնորհիվ կափարիչների այդպիսի կառուցվածքի (ներծծող և ճնշիչ) հեղուկը ռեզերվուարից (տակառից) ողային խուփի մեջ է քշվում, իսկ զերվուարից (տակառից) ողային խուփի մեջ է քշվում, իսկ ալյուտեղից ճնշման ներքո փոխադրական խողովակի և այնուհետև շլանգի միջով անցնում է ծայրակալի մեջ և փոշեցրվում:

Ապարատը կարող է չորս կաշեփող ունենալ:

«Գոմնա» սրսկիչը լայն ծավալում է ստացել համեմատա-
կան պարզ կառուցվածքի, հաստատունություն և բարձր արտա-
դրողականություն (մոտ 10 ծառ մի ժամում) շնորհիվ:

ՉԵՌՈՒ ԳՈՐԾԻՔՆԵՐ ԳԱԶԱՀԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ

Շվեդական տիպի գոդիչ լամպերը, 0,5—1 լիտրի տարողու-
թյամբ, կիրառվում են կայուն թՆ ամենաբազմազան առարկա-
ներից (ասֆալտ բետոն, քարե սանդուխտներ, պատեր, ճաղեր,
ծեփ (սվաղ), մետաղե կերտվածքներ) ալյումին միջոցով վազըն-
չացնելու համար:

Չանադյան տարողության յերկաթե ցիկկապատ անոթները—
10-ից մինչև 200 լիտր— և դույլերը կիրառվում են դազահան-
ման լուծույթներ և շիլա պատրաստելու համար, ինչպես նաև
նրանց մեջ զանազան մետաղե կերտվածքներ լվանալու համար:

Ներկարարական վրձինները կիրառվում են ընդհանրային շի-
լան դազահանվող շենքերի պատերին քսելու համար:

«ՓԵՍ» ելեկտրո-չերմարար ապարատը: Այնպիսի կերտ-
վածքների դազահանման համար, ինչպիսիք են հեռախոսային
ապարատներ, ժամացույցներ, բարոմետրեր, ռադիո-ընդունիչ-
ներ, արձատուրա և այլն, կարելի չէ ոգտագործել ելեկտրո-
չերմարար ՓԵՍ ապարատը, վրը կիրառվում է առորյա կեն-
ցաղում և վարսավիրանոցներում մազերը չորացնելու համար:

ՓԵՍ ապարատը տաք ոգի հոսանք է տալիս (մինչև 60°) և
աշխատում է սովորական լուսավորական ցանցից 120 և 220
վոլտ ուժգնությամբ:

Վորովհետև այդ որինակ ապարատներով կատարվող դազա-
հանումը հիմնված է թՆ-ի արագ գոլորչիացման վրա, ապա
աշխատանքները նրանց հետ պետք է կատարել կամ բաց ոգում,
կամ վառարանի արտամղման առջև (բաց խողովակի առկայու-
թյամբ):

ԹՆ ծառերի սաղարթներից, տանիքներից, հարթ պատերից
և այլն վաղաղելու համար ոգտագործվում են սովորական հըր-
չեջ մեքենաները, հիդրանտներ, հրչեջ և այլ պոմպեր, ինչպես
նաև քաղաքային բարձր ճնշման ջրմուղային ցանցը:


ՇԱՐԺԱԿԱՆ ԽԱՐՈՒՅԿՆԵՐ ՅԵՎ ԿՐԱԿԱՐԱՆՆԵՐ

Շարժական խարույկներ կոչվում են զանազան ձևի թավա-
ներ և տուփեր, վորոնք պատրաստված են թերթավոր յերկա-
թից 1—2 մմ հաստությամբ և վորոնց մեջ այրվում են նա-
խորոք դյուրավառ խառնուրդով կամ կերոսինով տոգորված
սղոցուք կամ հնոտի: Սղոցուքը պահվում է յերկաթե, սնդո-
րեն փակված տակառներում: Շարժական խարույկները կիրառ-
վում են թՆ-ի կանգառման վայրերում ողափոխություն ստեղ-
ծելու համար: Կրակարանների համար ոգտագործվում է սովո-
րական փայտածուխը:

ՀԱԳՈՒՍՏԻ, ՎՈՏՆԱՄԱՆԻ, ՏՆԱՅԻՆ ԱՌՈՐՅԱ ԿԵՆՅԱՂԻ ԻՐԵՐԻ ԳԱԶԱՀԱՆՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Այն միջոցներից, վորոնք կարող են ոգտագործվել հագուս-
տի դազահանման համար, առաջին հերթին պետք է մատնանը-
չել հասարակական լվացքատները, վորպիսիք պետք է նախորոք
հարմարեցվեն այդ բանի

համար: Բացի դրանից,
կարող են ոգտք զարյ այո-
պես կոչված, մոխրաջրա-
նոթները (բուչիլնիկներ)
(նկ. 14) — յերկարացրած
ձվաձևի շաներ յերկու կա-
փույրով՝ բեռնավորելու և
դարտակելու համար: Մոխ-
րաջրանոթն այնպես է տե-
ղավորում, վոր նրա մի մասը
բեռնավորման կափույրի
հետ գտնվում է վարակված




Նկ. 14. Մոխրաջրանոթ:

կիռում, իսկ մյուսը (դա-
տարկման կափույրի հետ)—մաքուր կիռում: Յերկու կեսերն ել
բաժանված են խուլ միջնորմով: Կափույրներն այնպես են իրար
հետ կապված լծակների սիստեմով, վոր յերբ մեկ կափույրը
բացվում է, մյուսը չի կարող բացվել: Վորպեսզի ժանգոտ
մետաղի հետ հնարավոր հպում ունենալու հետևանքով առաջա-
ցած ճերմակեղենի փչացումից խուսափեն, մոխրաջրանոթի ներ-

սում փայտե վանդակներ են հաստատվում: Փայտե վանդակի տակ հատակին զետեղվում է խուլ կամ ծակոտկեն ոճաղալարուկ, ջուրը գոլորշով տաքացնելու համար: Մոխրաջրանոթի մոտ են բերում խողովակներ ինչպես տաք, այնպես և սառը ջրով: Ուղափոխութեան բոլոր փակաղակները և իջեցման ծորակը դասավորված են մաքուր կիսում: Մոխրաջրանոթի տարողութունը տարբեր է լինում— 40-ից մինչև 80 կգ չոր ճերմակեղեն:

ԿԵՆՏԱՂԱՅԻՆ ԼՎԱՅՔԱՅԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ

Փոքր քանակութեամբ վարակված ճերմակեղենի դաղահանման համար կարող են զանազան կենցաղային գործիքներ ուղա-



Նկ. 15. Գաղահանման կամերա:

գործվել՝ ճերմակեղենը յեռացնելու նպատակով, վորոնց թվում և ելեկտրո-լվացքային մեքենաները:

Իրդե, մորթե և կաշվե առարկաների դաղահանման համար ծառայում են հատուկ կամերաներ քաղաքային բաղնիքներին, հիվանդանոցներին և դեղինֆեկցիոն (ախտահան) հիմնարկություններին կից (նկ. 15):

Հազուադեպ վրա ընկած իսրիտի առանձին կաթիլներ գոլորշիացնելու համար կարելի յե ուղադործել սովորական հարթուկը, նրանով աշխատելով բնակելի շինությունից դուրս, ուղը չվարակելու համար: Պետք է հարթուկել նախ չոր տաքացմամբ, իսկ այնուհետև խոնավ փալասի վրայից՝ գոյացած գոլորշով թ՛ն մնացորդները վոջնչացնելու համար:

Այն հազուադեպ և կահույքի հողմահարումն արագացնելու համար, վորոնք վարակված են թ՛ն գոլորշիներով կամ թունավոր ծխերով, կարելի յե ուղադործել սենյակի սովորական փոշեծուծը:


Լվացքատներին կից յեղող չորացնելու շինությունները վորոշ դեպքերում կարող են հարմարեցվել թունավոր ծխերով և թ՛ն մառախուղով վարակված հազուադեպ արագորեն հողմահարելու համար (մի քիչ տաքացնելով): Սակայն այդ շինությունն ընտրելիս պետք է հաշվի առնել դուրս նետվող ողի կիսվածքի հնարավորությունը բնակելի շինությունների վրա:

ՋՐԻ ԳԱԶԱՀԱՆՄԱՆ ՏԵՆՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

ՁԻԼՏԻ ՋՐԻ ԳԱԶԱՀԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ

Տարասովի սիստեմի ջրմուղային ֆիլտրը իրենից ներկայացնում է հարմարանք ջուրն իր քննութեան կետերում գաղահանելու համար (նկ. 16): Ֆիլտրը խողաղ ժամանակ կարող է կիրառվել վոջ բավարար չափով համեղ այնպիսի ջուր ունեցող վայրերում, վորն անհաճո հոտ կամ վորևե յերանգավորում ունի, ինչպես նաև համաճարակների ժամանակ աղիքների հիվանդություններից պահպանելու նպատակով: Ֆիլտրը (նկ. 17) բաղկացած է գլանաձև կորպուսից կափույրով և սալորային խողովակով: Կափույրի վրա վերալցման խողովակ կա: Սալորային խողովակի դիաֆրագման և վերալցման խողովակը հանդիսանում են ֆիլտրացման արագութեան կարգավորիչը: Յեթե


Ֆիլտրի համար սահմանված Ֆիլտրացման արադուկյունը գերազանցվի, ապա ջուրը, չհարողանարով դուրս թափվել օտարաչին խողովակի միջից, դուրս կգա վերալցման խողովակի միջով և այդ բանով կմատնանչի Ֆիլտրի աննորմալ աշխատանքը, վորը



Նկ. 16. Տարասովի Ֆիլտրի ընդհանուր տեսքը:

պահանջում է Ֆիլտրացման արադուկյան փոքրացումը փակադակի պտտեցմամբ: Ֆիլտրի պատրաստումը կատարվում է հետևյալ կերպով:

Ֆիլտրի ցանցակերպ կեղծ հատակի վրա դրվում է մետաղի մի ցանց: Ցանցի վրա զետեղվում են մատերիայի շրջանակ, վորը



Նկ. 17. Տարասովի Ֆիլտրի կտրվածքը:

ըը դուրս են կտրել ջրում յեռացման միջոցով մշակումից ազատված վուշի պատասուից: Հյուսվածքային միջադրի վրա դրնում են սովորական հիգրոսկոպիկ բամբակի մի շերտ, 3—5 դ ծանրությամբ, այնուհետև ածուժ են մանր ակախվացրած ածուխ: Ածուխն ածուժ են աստիճանաբար մերթնդմերթ թըխթըխկացնելով, վորպեսզի խտացնեն լցնելը: Ածխի շերտը ծածկում են բամբակով (5—7 դ) և հյուսվածքային միջադրով ու փակում հորատված ցանցավոր կափուլը: Կափուլը շրջադժում չորս կտրվածք ունի, վորոնց միջից անցնում են համապատասխան չորս բևեռներ կորսուում: Կափուլը խորացնելով բևեռներից ցածր և շրջելով այն շրջագծի $1/3$ -ով, դրանով փակում են բամբակով (5—7 դ) և հյուսվածքային միջադրով ու

Յեռաբաշխիկի, փակադակի և վրադիր պտուտակամերով ոժտված կարճ խողովակի միջոցով Ֆիլտրը միանում է ցանկացած ջրմուղային ծորակին, ինչպես այդ ցույց է տրված դժադրում: Ֆիլտրի ներքին մակերեսը ծածկում են բակելիտե կամ ասֆալտե լաքով կորրոզիայից (ուսովելուց) պաշտպանելու համար: Արտաքին մակերեսը ներկվում է:

Ֆիլտրի մի լցանքի աշխատանքի տևողությունը կախված է ջրի բնական բաղադրությունից և այն թՆ-ի կոնցետրացումից և բնույթից, վորով վարակված է ջուրը: Հետևաբար, վորոշ ժամանակից հետո Ֆիլտրը պահանջում է վերալցման աշխատանքը:

Ֆիլտրի վերապատրաստման անհրաժեշտությունը վորոշվում է հատուկ սարքվածքով (սարք):

Սարքվածքն իրենից ներկայացնում է փայտե փոքրիկ արկղ $19 \times 14 \times 4$ սմ. չափսով: Արկղի հետին պատի վրայի հանդուցները (մերակները) թույլ են տալիս այն կախելու պատի վրա՝ Ֆիլտրին մոտիկ:

Արկղում դտնվում են յերկու փորճանոթներ խաղերով՝ փորճանմուշ վերցնելու և թՆ վորոշելու համար և չորս փորճանոթներ՝ ռեակտիվներով: Նրանցից.

- մի փորճանոթը պարունակում է քիմիական մաքուր $500/10$ ծծմբական թթվի լուծույթ
- մյուսը » » » պերմանգանատի լուծույթ $1/100$
- յերրորդը » » » Նեկրատի ռեակտիվը
- չորրորդը » » » կալիումի յոդիդի և ուլայի լուծույթ:

Յուրաքանչյուր փորձանոթին կից հղված խցան կա և կաթ-
լաչափ ուսակտիվ վերցնելու համար:

Վերջին յերեք փորձանոթները մզացրած են ասֆալտի լա-
քով: Յուրաքանչյուր փորձանոթի տարողութունն է 25 սմ³:

Արկղի կափուցումը ղեկավարված են չորս փոքրիկ փորձանոթ-
ներ կձեպի խցաններով:

Փոքրիկ փորձանոթները պարունակում են.

մեկը—քիմիապես մաքուր ցինկի կտորներ,
մյուսը—թղթեր, վորոնք թրջված են սնդիկի բրտիլի լուծույթով,
յերրորդը—բամբակ, թրջված կապարի ացեաատով,
չորրորդը—քլորակիր կամ կալցիումի հիպոքլորիտ:

Այս սարքվածքով կարելի յե կոնտրոլի յենթարկել Ֆիլարի
աշխատանքը և վորոշել նրա կիրառման և վերալցման կարիքը:

III. ՔԻՄԻԱԿԱՆ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅՈՒՆ

ՔԻՄԻԱԿԱՆ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ՅԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Քիմիական հետախուզութունը կազմակերպվում է՝ վարակ-
ման սահմանները պարզաբանելու և ճշտելու համար.

վարակման ո՞ջախը ցանկապատելու համար.

պարզաբանելու՝ բնակչութունը դուրս բերելու ուղի-
ների մասին (յեթե այդ առաջ է գալիս անհրաժեշտութունից):

Այս նպատակներին հասնում են, յեթե վորոշում են՝

այն վայրը, վորտեղ կիրառվել է թ՛ն.

թ՛ն կիրառելու յեղանակը.

կիրառված թ՛ն-ի բնույթը.

վարակման որջեկանները.

վարակման չափերը և սահմանները և քամու ուղղութունը
վարակման վայրի շուրջը:

Մոտավոր տեղեկութուններ քիմիական վարակման վայրի
մասին սովորաբար դալիս են հսկողության այն պոստերից, վո-
րոնք հաղորդում են առավել կամ նվազ չափով ճշգրտորեն
վարակման վայրի և այն յեղանակի մասին, վորով նա
իրագործվել է: Այդ տեղեկութուններն արդեն հնարավորու-

թյուն են ընձեռում վորոշ յեղրակացություններ անելու վա-
րակման բնույթի և չափերի մասին: Իրագրությունը լիովին
ճշտելու և դադահանման մասին վորոշում ընդունելու համար
ինքնապաշտպանության խմբակի պետը քիմիական հետախուզու-
թյուն է ուղարկում: Հիմնական ստորաբաժանումը, վորը վա-
րակման հետախուզութունը, հանդիսանում է քիմիական ողակը:
Քիմիական հետախուզության աշխատանքի հիմնական պահանջնե-
րը հանդիսանում են արագաշարժութունը և նշույթյունը:

ՔԻՄԻԱԿԱՆ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Քիմիական հետախուզության միջոցները հանդիսանում են.
ա) տեղեկություններ այն միջոցների մասին, վորը կիրա-
ռում է հակառակորդը (տես. դլուխ առաջին).

բ) տարբեր թ՛ն կատարված վարակման արտաքին հատկա-
նիչները (տես. II հավելվածը դրքի վերջում).

գ) ինդիկատորական թղթերի կամ ոժանդակ ուսակտիվների
ցուցմունքները (տես. ստորև).

դ) միջոցներ փորձանմուշներ վերցնելու համար.

յե) ցանկապատման նշանները.

զ) քամու ուղղության և ուժի չափիչները:

Իրատղներից ստացված տեղեկությունները հարձակման մի-
ջոցների մասին արդեն վորոշ ցուցումներ են տալիս կիրառված
թ՛ն-ի բնույթի վերաբերմամբ.


ինքնաթիռից փոշեցրելիս—ամենից ավելի հավանական է
կարելիավ կամ լյուելիտով, կամ նրանց խառնուրդով վարակու-
մը.

հեռակայանում բնույթի պայթման ժամանակ — միևնույնը,
և հնարավոր են դիֆուզիան, բրտմանդիցիտանիդը և մի քանի
կիսակայուն թ՛ն-ով.

բախական ներգործության ուժերի պայթման ժամանակ—
ամենաբազմազան թ՛ն:


Ամենից ավելի բարդ է վորոշել վերջինի դեպքում: Այստեղ
ողնում են զանազան արտաքին հատկանշաններ, վորոնք մատնա-
նշված են II հավելվածում:

Վարակման փաստը հաստատելու և ԹՆ-ի բնույթը վորոշելու համար քիմիական հետախուզությունը բավարարվում է քիմ-հետխուզյլի պայուսակով կամ Դ—А դադրորոշչիով (տես. ստորև) :
Պայուսակը նախանշվում է ԹՆ անմիջականորեն վորոշելու համար քիմիական վարակման ոջախներում աշխատելիս : Նա իրենից ներկայացնում է բրեզիլոտե պայուսակ յերիզով՝ ուսին կրելու համար (նկ. 18) :



Նկ. 18. Քիմիատախուզյլի պայուսակ :

Պայուսակում դետեղվում են հետևյալ առարկաները :
1. Ինդիկատորական ապարատիկ (նկ. 19), վորն իրենից ներկայացնում է թիթեղյա տուփ (a) կարծ խողովակով, ապարատիկը փայտին (б) ամրացնելու համար : Ապարատիկն ունի կափուջը (r), վորը բացվում է կողքից և թույլ է տալիս ապարատիկի մեջ դնելու կոճը (д) ինդիկատորական ժապավենի (e) ուղղնի հետ : Ինդիկատորական ապարատիկը պահվում է ուստի-նամ կտորի շապիկում :
Հետախուզություն կատարելու համար կոճը ինդիկատորական ժապավենի ուղղնի հետ դնում են ինդիկատորական ապար-



Նկ. 19. Ինդիկատորական ապարատիկ :

ատիկի մեջ և ժապավենի ծայրը հանում են դուրս ձեղքի մի-ջով : Այնուհետև ժապավենը ձգում են տուփի հատակի յերկա-րությամբ և ամրացնում են կողքից՝ կապերի (э) ողնությամբ : Վարակված տուփը նստեցնում են փայտի վրա :

ԿթՆ-ով վարակված մակերեսին ապարատիկով հպվելու ժամանակ ինդիկատորական թուլքը փոխում է իր գույնը : Ինդիկատորական ժապավենի ողտազործած կտորը դուրս են հանում ծայրից և պոկում, ընդ նմին ապարատիկի վերացումը կատարվում է ինքն իրեն :

2. Հինդ դրոշակիկներ վարակման ոջախի սահմանները նշանակելու համար : Վերջին ժամանակ ընդունված են դեղին գույ-նի դրոշակիկներ 15×20 սմ. չափսով :
3. Յերկու կտոր պարան 10-ական մ յերկարությամբ դեղին գույնի՝ շարված դրոշակիկներով, վորոնք նմանապես նախանշված են վարակման ոջախի սահմանները նշանակելու համար :

4. Յերեք փորձանոթ ուստիս խցաններով և պիտակներով : Փորձանոթները նախանշված են վարակված հողի փորձանմուշը վերցնելու համար :

5. Վեց լուսավոր աղյուսակիկներ ոջախի սահմանները դի-չերային պարխաններում նշանակելու համար :

6. Մի գույզ ուստիս նուրբ ձեռնոցներ՝ ձեռքերը պաշտպա-նելու համար :

7. Հակաքիմիական ծրար (փաթեթ) ինդիկատորական ապարատիկը, ձեռնոցները և այլն զաղահանելու համար :

8. Յերկաթե թիակ հողի փորձանմուշ վերցնելու համար :
9. Ելեկտրական լապտերիկ :
10. Գրչահատ :
11. Քիմիատախուզյլի գաշտային գրքույկ մատիտով և հրա-հանգով :


Ինդիկատորական ապարատիկը և շրջափակության նշաններն ամրացնելու (դրոշակիկներ կամ լուսավոր աղյուսակիկներ) ձեռ-նափայտերը պատրաստվում են առանձին կերպով թվով 5—7 հատ :

Քիմիատախուզյլի պայուսակը թույլ է տալիս կատարելու կայուն ԹՆ-ի վորոշումը հեղուկ վիճակում հողի վրա, չենքե-րում, հագուստի վրա և այլն : ԿթՆ և ԱթՆ-ի գույրը ինքները ո-ղում վորոշելու համար քիմիատախուզյլի պայուսակի վերջին ո-

ըինակներն ուտված են կողկտորով, վորի մեջ դարսված են հերմետիկ փակ ինդիկատորական թղթերը՝ ջրորի, Փոսզենի, դիֆոսզենի, կապտաթթվի և ամիածնի ոքսիդի հայտնաբերելու համար: Ինդիկատորական թղթերի ծայրերը կարող են ըստ կարիքի հանվել կողկտորից: ԹՆ-ի ազդեցութեանը համապատասխան թուղթը փոխում է իր գույնը:

Դ—4 ԳԱԶՈՐՈՇԻՉ

Բոլոր կասկածելի դեպքերում կամ արված յենթազրու-
թյունն սուղելու նպատակով, ինչպես նաև դադահանման լի-
կատարությունը կոնտրոլի յենթարկելու համար՝ ԹՆ-ի վորո-
շումը կատարում են գազորոշիչի ողնությամբ, վորն ավելի
ճշգրիտ ցուցմունքներ է տալիս, քան քիմիկատորայի պայու-
սակը:




Նկ. 20. Դ—4 Գազորոշիչ:

Գազորոշիչն (Նկ. 20) իրենից ներկայացնում է մի ապարատ, վորի ներգործությունը սովորաբար հիմնվում է տարբեր քի-
միական նյութերի (այսպես կոչված ինդիկատորների) գույնի
փոփոխութեան վրա այս կամ այն ԹՆ-ի ազդեցութեան ներքո:
Գիտական նպատակների համար ներկայումս կիրառվում է Դ—4
որինակի (նմուշի) գազորոշիչը:

Դ—4 գազորոշիչը յերկու բաժանմունք ունի:

Առաջինը—առջևիկը պարունակում է բոլոր անհրաժեշտ բա-
ներն ողում դիտական յեղանակով ջրոր, Փոսզեն, դիֆոսզեն,
ամիածնի ոքսիդ և կապտաթթու վորոշելու համար, ինչպես
նաև իպրիտի առկայությունը հողի և զանազան առարկաների
վրա:

Յերկրորդը— հետևիկը այնպիսի առարկաներ է պարունա-
կում, վորոնց ողնությամբ կարելի յե պարզել իպրիտի և ար-
սենային ԹՆ-ի (լյուիդիտի, ադամսիտի և այլոց) ներկայու-
թյունը ջրում. վերցնել այնպիսի ողի փորձանմուշ, վորը վա-
րակված է թունավոր ծխերով: Հենց այստեղ են դանվում ելեկ-
տրական լապտեր և զանազան ուսանողական առարկաներ՝ ռետինե
ձեռնոցներ, պինցետ, ինդիկատորական թղթեր, իպրիտ և լյուի-
դիտ և այլն հայտաբերելու համար (Նկ. 21):



Նկ. 21. Դ—4 գազորոշիչի պարունակությունը:

Դ—4 գազորոշիչի նախապատրաստությունն աշխատանքի
համար կայանում է հետևյալում:

1. Գազորոշիչը դետեղում են վորևե պատվանդանի կամ
դեանի վրա:

2. Բաց են անում առջևի և հետևի բաժանմունքները:

3. Սեղմիչներից դուրս են հանում կոլլեկտորի ապակե խողովակները և բաց են անում նրանց միջև բոլոր խցանները:

4. Բույնից հանում են թիթեղյա արկղը, բաց են անում այն և վերցնում պինցեալը և պիպետկան (կապույտ շերտիկով):

5. Վերցնում են փորձանոթը՝ թղթերով կապտաթթվի հայտարարման համար (սպիտակ թղթեր կապտապուրն նրբերանդով) և սրվակ ու նեակտիվով այդ թ՛ն վորոշելու համար, բաց են անում փորձանոթը և սրվակը, պինցեալի ողնությամբ հանում են ինդիկատորական թուղթը և պիպետկայից թրջում են վերջինս յերկու-յերեք կաթիլ ու նեակտիվով, թուղթը դնում են կոլլեկտորի չորրորդ խողովակի մեջ, իսկ փորձանոթը և սրվակը փակում:

6. Վերցնում են փորձանոթը ինդիկատորական թղթերի հետ զրորի, Փոսդենի (նույնինքն դիֆուզենի), հայտարարելու համար և բաժակիկ՝ բամբակով զրորը կլանելու համար, բաց են անում փորձանոթները և բաժակիկն ու թուղթը (դեղին) պինցեալով դնում կոլլեկտորի առաջին խողովակի մեջ զրորի հայտարարելու համար, Փոսդենի հայտարարելու համար (սպիտակ) — յերրորդի մեջ և մի կտոր բամբակ — յերկրորդի մեջ, փակում են փորձանոթները և բաժակիկը:

7. Խցանները պնդորեն ամրացնում են կոլլեկտորի խողովակներին և կոլլեկտորն ամրացնում սեղմիչներում:

8. Վերցնում են մի կապույտ ինդիկատորական թղթեր (20 հատ) ի պրիտ և լյուիզիտ հայտարարելու համար և ուտինե ուղերի բաժակիկից մի քանի ող:

9. Վերցնում են նախորդ պատրաստված 2—3 փայտե ձողեր 30—40 սմ յերկարությամբ և ուտինե ողերի ողնությամբ ամրացնում են ձողերի յերկու ծայրերին ել մեկական թուղթ:

Ծխերի վորոշումը

Թունավոր ծխի փորձանմուշ վերցնելու համար աշխատանքը կատարվում է հետևյալ կարգով:

1. Բաց են անում դազորոշիչի հետևի բաժանմունքը, հանում են թիթեղյա արկղը և այնտեղից վերցնում ապակե շերտազարդված խողովակ բամբակով:

2. Բաց են անում առջևի բաժանմունքը և հանում ուտինե

առանձը, անջատում են այն իր վրա հաղցրած ուտինե խողովակի հետ միասին:

3. Ուտինե այն խողովակը, վորը միացած է ուտինե տանձի (կարմիր շերտիկով) ներծծող ծայրի հետ, հաղցնում են բամբակ պարունակող շերտազարդված խողովակի նեղ ծայրին և բաց անում այն խցանը, վորը փակում է մատնանշված խողովակի լայն ծայրը:

4. Կատարում են առնվազն տանձի 50 սեղմում:

5. Շերտազարդված խողովակի լայն ծայրը ծածկում են խցանով և նեղ ծայրից հանում ուտինե խողովակը տանձով:

6. Ձիլորը բամբակի հետ առաջին իսկ հնարավոր դեպքում ուղարկում են համապատասխան լաբորատորիան հետազոտության համար, մանրամասնորեն մատնանշելով, թե վորտեղ է վերցվել փորձանմուշը, ինչ պայմաններում, ինչպես է ծխի բնույթը և ինչպես է նրա ներդրությունը:

Աթ՛ն-ի վորոշումը

1. Բաց են անում դազորոշիչի առաջին բաժանմունքը, բույնից վերցնում են ուտինե տանձը և նրա խողովակն անցկացնում արկղի կողքի փոքր պատի ձեղքով:

2. Տանձն առնում են ձախ ձեռքի մեջ և 20—30 արագ սեղմում կատարում, միաժամանակ բարձրացնում են դազորոշիչը և դիտում ինդիկատորական թղթերի դույնի փոփոխությունը:

ա) դեղին թղթի վարդազունացումը կոլլեկտորի առաջին խողովակում մատնանշում է զրորի ներկայությունը:

բ) յերրորդ խողովակի սպիտակ թղթի դեղնացումը խոսում է Փոսդենի կամ դիֆուզենի առկայության մասին:

գ) չորրորդ խողովակի թրջված սպիտակ թղթի կապտացումը նշանակում է կապտաթթվի ներկայությունը:

Կթ՛ն-ի վորոշումը

1. Ձողի վարի այն ծայրով, վորի վրա ամրացրած է ինդիկատորական թուղթը, շոշափում են վարակված դետնին կամ վարակված առարկաներին:

2. Յերկու-յերեք շոշափումից հետո դնում են թուղթը: Յեթե թղթի վրա բնորոշ բծեր չկան, չարունակում են թ՛ն-ի

վորոշումը մի ուրիշ վարակմամբ կասկածելի վայրում :
3. Հողի կամ զանազան առարկաների վրա կաթիլ-հեղուկ թ՛ն ներկա դանդաղու մասին դատում են դեղին ինդիկատորական թղթի վրա բծեր գոյանալուց .

ա) իսպրիտից— թխավուն-կարմիր , առավել պայծառ , քան ինքը թուղթը , դեղին շրջանակով բծեր .

բ) լյուկիտից— պայծառ մանուշակագույն-կարմիր :

Չողերի բացակայութեամբ ինդիկատորական թղթերը վարակված առարկաների մոտ են մակադրվում մատներով , վորոնք պաշտպանված են հատուկ մատնամաններով : Մատնամանները ուտինե ձեռնոցների վրայից հազցվում են բուժ և ցուցամատներին (մատնամանների նպատակն է—մատներին լրացուցիչ պաշտպանութիւն տալ մաշկա-պալարային թ՛ն-ից) :

Աթ՛ն-ի ներկայութեանը վորոշելուց հետո հետախուզողները դուրս են դալիս թ՛ն մթնոլորտից և կատարում դադորոշիչի վերացումը : Քլորը կլանելու համար նշանակված բամբակը փոխարինվում է թ՛ն-ի 15 վորոշումներից հետո :

Քիմհետախուզութեան ավարտումից հետո պաշտպանական ձեռնոցները դազահանվում են սպիրտով թրջած հնոտու ունու-թեամբ , վորպիսի սպիրտը գտնվում է դադորոշիչին կից : Գործածութեան մեջ յեղած ուտինե ողերը , և դավադաններն այրվում են ճիշտ այնպես , ինչպես և հնոտին , վորով դազահանել են ձեռնոցները :

Կթ՛ն-ի վորոշումը ջրում

Իսպրիտը և արսենային թ՛ն ջրում վորոշելու անհրաժեշտութեան դեպքում դադորոշիչն ոգտադործում են հետևյալ կերպով :

1. Վերցնում և բաց են անում թիթեղյա արկղիկը , վորից հանում են յերկու փորձանոթ և յերկու պիպետիկա (դեղին և կարմիր շերտիկներով) , իսկ արկղիկի ամբողջ բովանդակութեանը դասավորում են կափույրի վրա :

2. Բաց են անում փոքրիկ դոնակը , հանում են յերկու սըրվակի իսպրիտի և արսենային թ՛ն-ի սեպտիմետրով , բաց են առնում սըրվակները և նրանցից յուրաքանչյուրի մեջ են իջեցնում դեղին շրջանակով պիպետիկան—իսպրիտի սեպտիմետրի մեջ , կարմիր շրջանակով—արսենային թ՛ն-ի սեպտիմետրի մեջ :

3. Վերցնում են մառյալի մի անձեռնոցիկ և յերկու փորձանոթ , հանում են բիդոնչիկները (սպիրտիկներ) սպիրտով և հազնում ուտինե ձեռնոցները :

4. Փորձանոթները մեկը լցնում են այնպիսի ջրով , վորը կասկածելի յե վարակված լինելու տեսակետից , կեսը թափում են մյուս փորձանոթի մեջ , վերջինս դետեղում են թիթեղյա արկղի անկյունում յեղած ունկում :

5. Ազատ ձեռքով պիպետիկաների ունութեամբ փորձանոթներից մեկի մեջ 5-6 կաթիլ իսպրիտի սեպտիմետրով են ածում մյուսի մեջ—արսենային թ՛ն-ի նույնքան սեպտիմետրով :

6. Փորձանոթները փակում են իցաններով , թեթևակիորեն թափահարում են փորձանոթները և դիտում են պղտորութեան յերևան դալը (3-5 բոպեյից հետո) :

Պղտորութեանը վկայում է թ՛ն-ի առկայութեանը :

Կթ՛ն-ի վորոշման ավարտումից հետո՝

ա) փորձանոթները և պիպետիկաները դատարկում են , վորոշում են սպիրտով և արտաքուստ սրբում մառլի անձեռնոցիկի կամ բամբակի տղնութեամբ .

բ) ձեռնոցները դազահանում են , ինչպես մատնանջված և վերը .

գ) բոլոր առարկաները դարսում են իրենց տեղերում և դադորոշիչը փակում :

Առձեռն սեպտիմետրները քիմհետախուզութեան կատարելիս հանդիսանում են՝

ա) քլորակիրը կամ կալցիումի հիպոքլորիտը , իսպրիտի և ձակի վրա այդ նյութերը ցանելիս բոցի պայթյուն (վոթոց) կամ ծխիկ է գոյանում .

բ) անուշադրի սպիրտը— մի քանի կաթիլ քլորի և Ֆոսգենի մթնոլորտով ցողելիս սպիտակ ծխիկ է գոյանում :


ՅԱՆԿԱՊԱՏՄԱՆ ՆՇԱՆՆԵՐԸ

Ցանկապատման նշանները (աղղանշանները) նախանջվում են .

ա) ՀՊՊ ձևավորումներին և բնակչութեանը նախադրույացնելու համար , վոր նրանց նշանակած վայրի սահմաններում քիմիական վտանգն առկա յե .

բ) վարակման տեղամասի (ՎՏ) սահմանները ճշգրտորեն նշանակելու համար :

Արտաքին սահմանները նշանակում են դաշտային տիպի ցանկապատման աղբյուրներով — դեղին դույնի սլաքներով 1,2—1,5 մ բարձրության ձողի վրա յեղած «Վարակված է» մակադրուժյամբ կամ յեռոտանու վրա սարքած սկավառակներով (նկ. 22)։ Սկավառակները ներկում են դեղին դույնով։ Նրանց վրա նկարված է դանդ վոսկորներով և նրա տակ «Վարակված է» ստորագրուժյամբ, իսկ յերբեմն լինում է միայն «Վարակված է» մակադրուժյունը։ Յեռոտանին ոժտված է կեռով դիշեր ժամանակ լապտեր կախելու համար։



Նկ. 22. Վարակված տեղամասի ցանկապատման արտաքին նշանը։

Հանձնարարվում է սկավառակների յերանդավորում պայծառ ներկով, այն ժամանակ կեռերը լապտերի համար պարտադիր չեն։ Նշանները յեռոտանիների վրա պատրաստվում են տեղերում, ընդփոքում նրանց հաստատման ժամանակ սկավառակը պետք է 1,2—1,5 մ բարձրության վրա դանդի (սկավառակի վերին կտրվածքը)։ Նշանի կշիռը և դարարիտը պետք է թույլ տան, վոր մի հետախույզ ազատորեն վո՛չ պակաս քան չորս ծարված նշաններ փոխադրի։

Քիմիական ուղեքերի ձաղարները նշանակվում են դեղին

դրոշակիկներով, վո՛չ պակաս քան 20×20 սմ չափսով։ Դրոշակիկի մխոցաձողի յերկարությունը 60 սմ-ից վո՛չ պակաս։ Փայտե սղոցաձողերը վարակման դեպքում վո՛չնչացվում են այրմամբ։ Մետաղե դրոշակիկները դադահանվում են։

Հենց այդ դրոշակիկները կիրառվում են վարակման տեղամասի ճշգրիտ սահմանները նշանակելու համար, վորի համար նրանք դասավորվում են 1,5—2 մ իրարից հեռու տարածության վրա ՎՏ սահմաններում։

Յանկապատման նշանների և տեղական առարկաների միջև նպատակահարմար է շարժատ ձգել կախ ընկած դեղին դրոշակիկներով (նկ. 23) այն փողոցների և անցատեղերի լայնությամբ, վորոնցով յերթևեկություն չունի ՀՈՊ-ի տրանսպորտը (չտապ ոգնության կառքերը, հրդեհաշեջ մասերը և այլն)։ Մըխոցաձողերի վրա դրոշակիկների բացակայության ժամանակ թույլ է տրվում շարժատի միջադրումը դրոշակիկներով հողի վրա՝ վարակման տեղամասի ճշգրիտ սահմանները նշանակելու համար։


Ներքին բնակելի շինությունների վարակման ժամանակ ցանկապատման նշանը դրվում է նրանց մուտքի առջև։ Շինության ներսում վարակված մակերեսների և առարկաների նշանակումը կատարվում է կավիճով «Վարակված է» մակդրուժյամբ։

ՔԻՄԻԱԿԱՆ ՀԵՏԱԽՈՒՉՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԵԽՆԻԿԱՆ

Բնակելի տան պայծաններում քիմիական հետախույզությունը կատարվում է ինքնապաշտպանության խմբակի քիմիական ողակի ուժերով ողակի հրամանատարի ղեկավարությամբ։ Լսելով «Քիմիական տազնապ» աղբանշանը, վորը ավել է կապի ողակի ղիտողության պոստը, քիմիական ողակի հրամանատարը 2—3 մարտիկների հետ միասին, հակադադեր և պաշտպանական հագուստ հագնելով, վերցնելով դադորոշման միջոցները և ցանկապատման նշանները, անհապաղ ուղևորվում են դեպի վարակման վայրը։

Վարակման ոջախի հետախույզությունն իրադրծվում է ըստ հնարավորին հողմաբեր կողմից։ Հողմի ուղղության և ուժի մասին քիմիական ողակի հրամանատարը հաղորդադրություն է ստանում կապի ողակի հրամանատարից (ղիտողության պոստի պետից) դեռ ավելի կանուխ, — «Ողային տազնապ» աղբանշանից ուղղակի հետո, յերբ

վերահսկման պոստը կվորոշի ուղերևութաբանական տվյալները: Տան տերիտորիայում և առարկաների վրա բծեր հայտարարելու ժամանակ, ինչպես նաև ինչ տեսակ և կասկածելի հետքեր լինեն, մարտիկներն ուշադրությամբ զննում են վայրը:



Նկ .3 .Վարակված տեղամասի անմիջական ցանկապատումը:

Այդ զննությունն արդյունքները զնահատվում են համաձայն Ա հավելվածի: Յեթե հավաստված է իսրիտի և լյուիզիտի բացակայությունը, ապա ԱԹՆ-ի հոտի վորոշումը սղում կատարվում է հետևյալ կերպով:

Հետախույզը, բանալով կոմբինեզոնի կափարիչը, հակազազը հազած, խոր ներշնչում է կատարում: Այնուհետև ցուցամատով բարձրացնում է դիմակի յեզը և քթով փոքրիկ յրացուցիչ ներշնչում է կատարում, վորը հնարավորություն է տալիս ԹՆ հոտն զգալու: Դրանից հետո, ծածկելով շերտազարդված խողովակը, հետախույզը դորով արտաշնչում է վորջ ողը: Այդ բանը կրկնվում է 2—3 անգամ այն նպատակով, վորպեսզի ճըշտորեն համոզվեն հոտի բնույթի մեջ: Հոտի վորոշումը պետք է շատ զգուշությամբ կատարել, մանավանդ դառը նուշի հոտ յերևան դալու դեպքում (կապտաթթվի հատկանիշը):

ԹՆ շրջացրման շառավիղը քայներով

Ռումբի կշիւը (կգ-հերով)	Հողմը մինչև 3 մ/վայրկ.		Հողմը 3 մ/վայրկ-ից մինչև 6 մ/վայրկ.		Հողմը 6 մ/վայրկ-ից և ավելի բարձր		Կոտակ նրբակ հոտակ նրբակ հոտակ նրբակ հոտակ նրբակ	Կոտակ նրբակ հոտակ նրբակ հոտակ նրբակ	Կոտակ նրբակ հոտակ նրբակ
	Հոտակ նրբակ հոտակ նրբակ	Կոտակ նրբակ հոտակ նրբակ	Հոտակ նրբակ հոտակ նրբակ	Կոտակ նրբակ հոտակ նրբակ	Հոտակ նրբակ հոտակ նրբակ	Կոտակ նրբակ հոտակ նրբակ			
10	12	12	12	9	15	12	6	18	9
25	18	18	18	15	21	18	12	24	15
50	24	24	24	21	27	24	18	30	21

Յեթե մարտիկները նախորդ սովորացրած են, ապա սովորաբար բավական է լինում վորոշել յերկու-յերեք արտաքին հատկանիշ այնպիսիներեց, ինչպիսիք են հոտ, գույն, արտաքվարբություն, հեղուկի կաթիլների բնույթը, ոտմբի բեկորները և այլն, վորպեսզի ստույգ յեղրակացություն արվի ԹՆ բընույթի և նրա կիրառման յեղանակի մասին:

Այն վայրը, վորտեղ գտնվել է կորպուսը կամ հայտարարվել է ԿԹՆ պարունակող քիմիական ոտմբի բեկորների խումբը, կարելի յե ոջախի կենտրոնը համարել և յեթե հաջողվում է մոտավորապես վորոշել ոտմբի կալիբը, ապա դյուրին է հաստատել վարակման սահմանները, ողավելով 2 աղյուսակից:

Ռումբի կալիբը վորոշելու համար մարտիկները պետք է լավ ծանոթացած լինեն ոտմբերի մակետների և նրանց ձազարների չափսերի հետ:

ԿԹՆ-ի շրջացրմամբ վարակվելու ժամանակ վարակման սահմանները վորոնում են դլխավորապես կաթիլների հետքերով և ինդիկատորական թուղթ կիրառելու ճանապարհով:

Մասնանշված յեղանակներեց մեկով վորոշելով վարակված տեղամասի սահմանները՝ քիմիական ողակը հաստատում է ԹՆ գոլորչիների ծավալման սահմանները: Դրա համար կարելի յե ընդունել, վոր վարակված տեղամասի հողմարեր սահմանը դուրզադիպում է հենց տեղամասի սահմանին: Գոլորչիների ծավալման կողային և թիկունքային սահմանները վորոշում են ըստ

հոտի՝ վերը նկարագրված յեղանակով (հակազազը կիսարաց անելով) : ՎՏ սահմանները ճշգրտելուն դուզընթացաբար ողակի հրամանատարը դիտում է վարակված առարկաների բնույթը (հող, խոտ, պատեր, ծառեր և այլն) : Վարակված տեղամասի հետախուզությունը դադորոշիչի ողնությամբ վարում են այնպես, ինչպես նկարագրված է վերը :

Այսպիսով բոլոր անհրաժեշտ տվյալները հավաքելով, ողակի հրամանատարն անձամբ ղեկուցում է ինքնապաշտպանության խմբակի պետին հետախուզության արդյունքների մասին : (Այդ ժամանակ մարտիկները վարակված տեղամասի սահմանում ցուցադրում են ցանկապատման նշանները) : Զեկուցման մեջ պետք է մատնանշված լինի .

ա) վարակված տեղամասի դոնվելու ճշգրիտ վայրը .

բ) վարակման բնույթը (ձառար կամ կործանումներ ուումբից, ուումբի չափսը, շրջացրումը ինքնաթիռից) .

գ) ինչպիսի թ՛ն .

դ) վարակման տարածությունը .

ե) հողմաբեր կողմը և մոտեցման ճանապարհները .

զ) լրացուցիչ տեղեկություններ (բնակչությունը դուրս բերելու անհրաժեշտության և դադահանման կազմակերպման կարգի մասին) :

Այլիառումբերն անմիջականորեն չարդախի վրա կամ բնակարանի մեջ ընկնելու դեպքում հետախուզությունն առաջին հերթին յերևան է բերում տուժածների առկայությունը և վարակման բնույթը :

Նախագրուչություն : Նկատի առնելով, վոր շինության ներսում հեշտությամբ կարող են թ՛ն-ի բարձր կոնցենտրացումներ դոյանալ, պետք է շենքը մտնել զդուշությամբ, մինչև իսկ հակազազով : Թ՛ն-ի այն ամենավտճր հոտի ժամանակ, վորը թափանցում է հակազազի միջով, հետախուզյունը պետք է անհատազ հետ դառնան : Այդպիսի շինություն մուտք դործելը հնարավոր է միայն մեկուսիչ հակազազերով :

IV. ԳԱԶԱՀԱՆՄԱՆ ՅԵՂԱՆԱԿՆԵՐԸ

ՎԱՅՐԻ ԳԱԶԱՀԱՆՈՒՄԸ

ՃԱՆՍԱՊԱՐՀԱՅԻՆ ԾԱԾԿՈՒՅԹՆԵՐ

Առֆալտով, կոպիճով, չորեքիուսի դերանի բեկորով ծածկված ճանապարհային ծածկույթների— մայթերի, անցատեղերի և բակերի դադահանումը կատարվում է հետևյալ յեղանակներից մեկով :

1. Մի մակերեսի վրա, վորը թրջված է 0,5 $\sqrt{A^2}$ քանակությամբ ջրով, կիտում են չոր քլորակիր 0,4 կգ/ A^2 քանակությամբ կամ կալցիումի հիպոքլորիդ—0,3 կգ/ A^2 քանակությամբ վորից հետո դոյացած շիլան ուշի-ուշով քսում են մակերեսին խողանակի կամ ալելի ողնությամբ : 30 րոպեյից հետո, իսկ յեթե հանգամանքները թույլ են տալիս, ապա մի ժամից հետո, շիլան ջրով վորողելով, առունեն են թափում :

2. Յնցուղներից կամ վորոզիչ մեքենաներից քլորակրային (կամ հիպոքլորիտային շիլա յեն թափում 1 լիտրը մի քառակուսի մետրին քանակությամբ : Շիլան պատրաստում են 1:1 (ըստ ծավալի) հարաբերակցությամբ, տրորում են նախորդ ձևով և $\frac{1}{2}$ —1 ժամից հետո լվանում :

3. Վարակված վայրը յենթարկվում է դադահանման՝ կրակով :

Այդ դործառնությունները կատարելու համար ողտադործվում են այն դործիքները և ձեռքի միջոցները, վորոնք նկարագրված են յերկրորդ դիտում : Մայթերը և անցատեղերը դադահանելով 2,5 մ ալելի լայնությամբ, յեթե հնարավորություն կա, պետք է ողտադործել կախովի ամտոմորելային դադահան սպարատը, վորը կարող է արագ և հավասարաչափ ծածկել դադահանվող անցքերը քլորակրով :

1000 A^2 -ից պակաս նեղ անցքեր և հրապարակիկներ դադահանելու համար ալելի ձեռնտու յե կիրառել ՎԴՊ—1 տիպի ձեռքով կրելու դործիքներ :

Գործիքների հետևում մնացած հողակտորները, հատուկ նշանակված մարտիկները լցնում են թիերի կամ մաղապատգարակների միջոցով :

Կրակով այրելու պրոցեսը կարող է կիրառվել լիակատար հրդեհային անվտանգության միջոցներ ձեռք առնելու պայման

նով: Մասնավորապես կարող է հանձնարարվել վարակված տա-
րածութիւնը հերթով այրելու յեղանակը: Այդ դեպքում տեղա-
մասը բաժանվում է լայնակի շերտերի, յերկու մետր լայնու-
թյամբ, և դուրսվառ հեղուկը թափում են հողամասի յուրա-
քանչյուր 4—5 շերտի վրա: Այդ շերտերի արանքի հեռավորու-
թիւնները և նրանց մեծութիւնը պետք է այնպես լինեն, վոր-
պեսզի՝

ա) տվյալ հողմի ժամանակ առանձին տեղամասերի բոցը
չկարողանա կրակի համատարած (միապաղաղ) մասսայի վերած-
վել, և

բ) վորպեսզի յուրաքանչյուր այրվող տեղամաս հնարավոր
լինի հանդցնել:

Դուրսվառ խոռոչները լցնելուց հետո տեղամասերը կիզ-
վում են, և այնտեղ թ՛ն-ի դաղահանում է տեղի ունենում: Յերբ
այրումն այդ տեղամասերում դաղարի, կիզումը կատարում են
հետեյալ հարեան շերտերում և այլն:

Ինչպես կրակի հետ կատարվող յուրաքանչյուր աշխատան-
քի ժամանակ, դաղահանման խմբերը պետք է կամ ուտինած,
կամ ներծծված պաշտպանական զգեստներ հագնեն, վորովհետև
ոլլիֆած կոմբինզոնները, ֆարտուկները (խալաթներ) և այլն
հեշտությամբ բոցավառվում են:

Կրակը հանդցնելու համար հարկավոր է ունենալ 1—2 դրոն
(պարտեզի թեթև տիպի) կամ 1—2 սայլ ավազ և 5—10 թի:

Դուրսվառ (կիզանյութ) լցնելը կատարվում է ցնցուղներից:
Պետք է նկատի ունենալ, վոր կրակային դաղահանման ժամա-
նակ թ՛ն-ի մի մասը գոլորչիւնում է և վարակում շրջակա ողը:
Ուստի դաղահանվող ոջախի մոտ գտնվելն առանց պաշտպանու-
թյան միջոցների անթյուրատրելի յէ:

Հ Ո Ղ

Չտալահատակված բակերը, ցցապատ տարածութիւնները,
պարտեզի միջուղիները և այլն դաղահանելու ժամանակ կարող
են ողտազործվել բոլոր հենց նոր նկարագրված յեղանակները
և, բացի դրանից, կարող է կիրառվել հողի վարակված շերտի
մեխանիկական հեռացումը: Այդպիսի տեղամասում անցումներ
կատարելու համար աշխատանքը կարելի յէ հետեյալ կերպով
կազմակերպել: Յուրաքանչյուր մարտիկի հատկացվում է մի

շերտ 0,5 մ լայնությամբ: Աշխատանքը բաժանում են և սկը-
սում յերկու միջլինները, ընդվորում նրանցից մեկը հանված հո-
ղը շարտում է դեպի ձախ, մյուսը դեպի աջ: Նրանց հետևում
հինգ քայլի վրա սկսում են աշխատել հետեյալ յերկուսը. նը-
րանք այնուհետև չորս կողմ են դեն շարտում առջևից դնացող-
ների կտրած հողը, և լայնացնում անցքը: Ապա աշխատանքին
ձեռնարկում են հետեյալ յերկուսը և այլն: Թիերով աշխատող-
ների հետևից գնում է մի մարտիկ ավելը ձեռքին՝ պատրաս-
տած ճանապարհից վարակված հողի առանձին դուռները սրբե-
լու-ալլելու համար: Հողի 8—10 սմ հաստության շերտը վերց-
նելու նորման 15 մ2 է մի մարդու համար մեկ ժամում:

Ինքնըստինքյան հասկանալի յէ, վոր կտրված հողը մնում է
վարակված և յենթակա յէ կամ անվտանգ տեղ դուրս տարվե-
լու, կամ քլորակրով դաղահանման յենթարկվելու:

ՄԱՆԿԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՆԵՐ ԽՈՂԵՐԻ ՀՍՄԱՐ

Գաղահանումը քլորակրով դեպի չափով հանդիսանում է
մակերեսային, ուստի և այդ յեղանակով դաղահանված տեղա-
մասում կարելի յէ քայլել և շրջել հետիտոն և հեծյալ, բայց
չի կարելի վորեւէ աշխատանք կատարել առանց պաշտպանական
ձեռնոցների:

Պարտեզի հրապարակիկները և ավաղի արկիկները, վորտեղ
սովորաբար խողում են մանուկները, պետք է դաղահանվեն վա-
րակված շերտը մեխանիկորեն հեռացնելու և շատ ուշի-ուշով
կիզելու ճանապարհով: Այդպիսի հրապարակիկներ մանուկների
խողերի համար կարելի յէ բանալ վո՛չ կանուխ, քան դաղա-
հանման լիակատարութիւնը քիմիական փութաջան ստուգման
յենթարկելուց հետո և միայն ՏՀՈՊ-ի տեղամասային շտաբի
թույլտվությամբ:

ՄԱՐԴԱԳՆՏԻՆՆԵՐ ՅԵՎ ԾԱՂԿԱՆՈՑՆԵՐ

Մարդադետիկները և բակի տեղամասերը, վորոնք յենթարկ-
վել են կայուն թ՛ն-ի վարակմանը, ծածկված են խոտով և ծա-
ղիկներով, պետք է տակից հնձվեն: Ստոր կիզվում է կամ քլո-
րակրով ջրցանվում և թաղվում փոսի մեջ, վորից հետո տեղա-
մասը դաղահանվում է վերը մատնանշված յեղանակներից մե-
կով:

ՁՅՈՒՆՆ ԾԱԾԿՈՂԹԻՒՆՆԵՐ

Ձյունն ծածկույթի գաղահանման համար քլորակիրն անպետք է, իսկ հրային յեղանակը խիստ անտնտես է: Ուստի այստեղ հիմնական ձևը հանդիսանում է վարակված շերտի մեխանիկական հեռացումը: Անցման անցքեր են բաց անում ճիշտ այն, ինչպես վարակված հողի վրա: Մեծ տարածութուններից ձյունը քերելու համար պետք է ոգտադործել համապատասխան ձյունահավաք մեքենաները (այլտողութան, այվածու խողանակներ): Վարակված ձյունը հալում են ձյունահալուկներին միջոցով, ընդվորում առհասոզ ջրի մեջ ժամանակ առ ժամանակ քլորակիր են անում մոտավորապես 1 կգ-ը՝ 1 մ³ ձյունին հաշվով:

Մառցաշերտի ժամանակ իպրիտը վողողել-տանելու համար կարելի յե ոգտադործել բաղնիքների, բլացքատների և կենտրոնական ջերմացման հեռացող կեղտաջրերը:

ՀՈՂԻ ԱՆՀԱՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Առունների, ձաղարների, փոսերի և սրանց նման այն վայրերի գաղահանումը, վորոնք անմատչելի յեն սայակիր դործիքների համար, իրադործվում է կամ ձեռքի միջոցներով-թիերով և մաղապատգարակներով, կամ փոշեցիր և ջրցան ապարաաներով, ինչպես նաև ձեռքի կրակային դործիքներով և վայրի այրմամբ կիզանյութ թափելու ճանապարհով:

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՈՒՄՆԵՐԻ ԳԱՁԱՀԱՆՈՒՄԸ

Ինչպես մատնանշվեց առաջին գլխում, ինքնաթիռից ԹՆ ցանելիս, շենքերը, վորպես կանոն, կվարակվեն միայն արտաքուստ, գլխավորապես տանիքները և պատերը հողմաբեր կողմերից:

Փուլասային ուղմբերը պատուհանների մակարդակի վրա պայթելիս, վերջինները կարող են բեկորներով ջարդ ու փշուր լինել և կամ պայթյունի դորությամբ դուրս նետվել: ԹՆ-ի ցալքունները կարող են ընկնել շինության ներսը կամ-մեծ քանակությամբ արտաքին պատերի վրա: Յերբ տանիքները և ա-

ռաստաղային ծածկույթները ծակված են, այլիառումբի պայթյունը կարող է բնակելի շինության ներսում տեղի ունենալ: Այդ դեպքում թունավորող նյութով կարող են վարակվել հատակները, պատերը, առաստաղը և շինության մեջ գտնվող բոլոր առարկաները, ընդվորում այդ առարկաների մի մասը հավանորեն կկործանվի, և հարկ կլինի այն վոչնչացնել:

ՏԱՆԻՔՆԵՐԸ ՅԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՊԱՏԵՐԸ

Ինքնաթիռից ԹՆ ցանելիս վարակում առաջանալու դեպքում, յերբ վարակման խտությունը մեծ չէ, շենքերի տանիքները և պատերը, վորպես կանոն, գաղահանվում են բնական հողմահարության ճանապարհով: Այդ դեպքում գաղահանման խումբը սահմանափակվում է վարակված որյեկտներն ուշի-ուշով ցանկապատելով նրանց հետ շփվելու ամեն մի հնարավորություն կանխելու համար: Դրա համար դրվում են համապատասխան նշաններ, կապում են թուկը դեղին դրոշակիկներով, չարգախների մուտքերը փակում են: Անհրաժեշտ է նաև գաղահանման ժամանակ բնակչությանը ծանուցել, մանավանդ բակի բանվորներին, դռնապաններին, հնոցապաններին և ուրիշներին, տանիքում մնալու և պատերին կաշեելու վտանգավորության մասին:

Այլիառումբը տան մոտերքում պայթելու դեպքում տանիքը և պատերը կարող են ամբողջովին ցողվել ԹՆ-ով: Այդ դեպքում գաղահանման ձեռնարկումների եֆեկտիվությունը կարող է զգալի չափով կախում ունենալ այն բանից, թե վորքան արագորեն կձեռնարկի խումբը գաղահանմանը: Այստեղ թանգ է յուրաքանչյուր բուպեն, վորովհետև վորքան այվելի խորն է ներծծվում ԹՆ, այնքան այվելի դժվարին կլինի գաղահանումը: Յեթե գաղահանման խումբը կարողանա աշխատանքին ձեռնամուկ լինել այվելի կանուխ, քան ԹՆ կներծծվի մատերիալի մեջ, ապա անհրաժեշտ է վարակված պատը կամ տանիքը վանալ ջրի հեղեղով: Այդ հանգամանքը կողնի ԹՆ-ի զգալի մասը հեռացնելու, վորից հետո, պետք է պատերի վարակված մակերեսը ցողել ներկանետից, կամ «պոմոնայից», կամ վրձինների ոգնությամբ քլորակրային շիլա քսել, վորը պատրաստված է 2 և կլի-րը 1 և ջրին հաշվարկով: Այդպիսի շիլայի ծախսման նորման է միանգամվա համար 1 և (կամ 1 կգ) 1 քառ. մ-ին:

Բոված շիրան թողնվում է պատի վրա մի որ և այնուհետև ուշի-ուշով լվացվում է ջրով: Սակայն չի կարելի մոռանալ, վոր այդ որինակ դադահանումը մակերեսային է, վոր թ՛ն կարող են ներծծվել պատի ներսը խորանցես: Ուստի, որինակ, ՀՈՊ-ի անդլիական ղեկավարութունը գտնում է, վոր պատի լիակատար գազահանում կարելի յե ձեռք բերել միմիայն հողմահարման ճանապարհով մոտավորապես յերեք շաբաթվա ընթացքում. այս ժամանակաշրջանում պատը վարակման վտանգ չի ներկայացնի, յեթե նրան չկպչեն:

Սատիկ վարակված տանիքի դադահանման համար բավական է այն առատորեն լվանալ ջրով, խողանակով ուշի-ուշով չփելուն ղուզընթաց: Ներկի մեջ արդեն լուծված թ՛ն կարելի յե ինքնազազահանման թողնել, վորը տաք յեղանակի պայմաններում կվերջանա մի որվա ընթացքում: Անհրաժեշտ է լվանալու ջուրը խառնել փոքր քանակութամբ քլորակրի հետ (1 կգ-ը— 1 մ3 ջրին):

ՆԵՐՔԻՆ ԳԱՏԵՐԸ ՅԵՎ ԱՌԱՍՏԱԳՆԵՐԸ

Շինությունների ներքին պատերը և առատաղները պետք է դադահանվեն առանձնապես ուշի-ուշով: Անհրաժեշտ է պատտանները հեռացնել և այրել: Ամենից լավագույնն է ներկված կամ չներկված, քարե, սվաղած, ցեմենտած պատերը դադահանել յերկարատև շրջանամբ ղողիչ լամպի միջոցով: Շիկացումը պետք է կատարել միջանցուկ քամու մեջ: Հարկավոր է կահույքը հեռացնել շինությունից, վորպեսզի ապահովագրվեն մասնակիորեն գոլորշիացող թ՛ն-ի գոլորշիների հնարավոր կլանումից:

Փայտե պատերը դադահանվում են քլորակրի շիրան առանձնապես ուշի-ուշով քսելով: Շիրան թողնվում է փայտի վրա, մինչև վոր ինքը պոկ է դալիս: Փայտե շենքերի այն մասերը, վորոնց կարող են ղխպչել մարդիկ, մշակվում են մատնանշված յեղանակով մի քանի անգամ, ընդհուպ մինչև հոտի անհետացումը:

Փայտե տախտակները, վորոնք սատիկ ցողվել են իպրիտով և կարողացել են ներծծել այն, պետք է փոխարինվեն նորերով:

Սատիկ վարակման ժամանակ (ուամբի պայթյունը շինության ներսում) հատակները վարակման տեղում պետք է քանդվեն և այրվեն: Մնացած դեպքերում դադահանումը պետք է կավել մինչև հոտի լիակատար անհետացումը: Յեթե մի քանի որից հետո հոտը վերստին յերևան է դալիս, դադահանումը պետք է կրկնվի:

Յեմենտի, բետոնի, սաֆալտի և կաֆելի (չքաղյուսի) հատակները լավ ներծծում են թ՛ն: Հանձնարարվում է դադահանել այդ նյութերը քլորակրի շիրան ածելով նրանց վրա և ուշի-ուշով խողանակով չփչիելով: Առավել արմատական, թեկուզ և հոգեմաշ յեղանակ է հանդիսանում դադահանումը ղողիչ այրոցով վերը մատնանշված նախադրույթյան միջոցառումները կիրառելով:

Փայտե հատակները կարելի յե դադահանել հետևյալ կերպով. այն հատակի վրա, վորտեղ յերևում են հեղուկ թ՛ն-ի ցալքունները, պետք է հող ցանել և նրա հետ միասին հեռացալքունները, պետք է հող ցանել և նրա հետ միասին հեռացնել թ՛ն: Վարակված հողը և սղոցուքը պետք է այրել կամ թաղել: Յեթե թ՛ն աննկատելի յե, ինչպես նաև այն դեպքում, յերբ նրա գլխավոր մասն արդեն հեռացված է, ինչպես վերը հիշատակին քսել խողանակով: Լավ է այդ խառնուրդին փոքր քանակությամբ ավաղ ալիւրացնել, վորն ոգնում է լավագույն կերպով քերելու վարակված տեղերը: Յեթե հատակում տախտակների քերելու վարակված տեղերը: Յեթե հատակում տախտակները միջև ձեղքեր կան, ապա քլորակրի մածուկը չի կարելի չափազանց ջրալի անել: ջուրը քլորակրի չափազանց թույլ լուծույթի հետ կարող է թ՛ն այդ ձեղքվածքները ցնել, վորոնք, այդ դեպքում, դադահանումից հետո ևս կարող են վարակման աղբյուր հանդիսանալ:

Վերակրի մածուկը հատակի վրա պետք է դոնվի 24 ժամվա ընթացքում, վորից հետո անհրաժեշտ է քերել այն և հատակը լավ լվանալ: Հատակը թ՛ն-ից լիովին մաքրելու համար յերբեմն անհրաժեշտ է լինում հատակին քլորակրի մածուկ քսուել 2—3 անգամ: Յեթե թ՛ն չափազանց խորն է ներծծվել հատակի տախտակների մեջ, ապա հարկավոր է վերջիններս պոկել և այրել:

Յեթե հատակը ծածկված է լինողեումով և ԹՆ կաթիլները տակավին չեն կարողացել ներծծվել, ապա պետք է դրանք անհասպաղ հեռացնել, ներծծելով փալասի, հնոտու, ծծողականի մեջ: ԹՆ-ի մեծ քանակութունների վրա ցանում են սղոցուք, ավազ, մոխիր, հող և այլն մատերիալներ, վորոնք չիվում են ավելով և հետագայում պետք է թաղվեն այրելու համար:

Դրանից հետո լինողեումը ծածկվում է ջրբակրի մածուկով, վորը մի որից հետո լվացվում է: Յեթե հոտ է գրացվում, գործառնութունը (ուպերացիան) կրկնվում է վերստին: Հին ճաքճաքված և տրորված լինողեումը դադահանման չի յենթարկվում և պետք է այրվի:

ՈՒՆ ԳԱԶԱՀԱՆՈՒՄԸ

Ողբ կարող է վարակված դուրս դալ հակառակորդի կողմից անկայուն և կիսակայուն ԹՆ գործադրված լինելու հետևվանքով: Կարող են այնպիսի դեպքեր լինել, յերբ ողբ կայուն ԹՆ-ի գոլորչիներով կամ մառախուղով վարակված լինի:

Ըստ լրագրական տեղեկութունների մասսայական կիրառման ժամանակ ջրորպիկրինն ընդունակ է վարակելու մինչև անգամ բաց վայրը Ծ—Տ ժամով, և հետևաբար, կանդաման սլայմաններում (կեռանկյուններ և սանդուխքային վանդակներ, բակի փակուղիներ) վարակումը կարող է որեր տևել:

Այնպիսի կայուն ԹՆ վարակված շինութունների ողբ, ինչպիսիք են խորխոր, լյուրիտը, բրոմբենդրցիանիդը, կարող է մի քանի որերի և շարաթիների ընթացքում վարակված մնալ, վորովհետև այն առարկաները, վորոնք կլանել են այդ ԹՆ, շատ դանդաղորեն հետ կտան վերջինները:

Այսպիսով, միշտ չե վոր կարելի յե հույս դնել ողբ արագ ինքնադադահանման վրա և շատ հաճախ հարկ կլինի հատուկ միջոցատումների դիմել:

Գաղահանման յեղանակները կարելի յե յերկու տեսակի բաժանել. դադահանում վենտիլացիայի ողնությամբ և քիմիական դադահանում:

Վենտիլացիայի ողնությամբ կատարվող դադահանումը կարող է տերմիկ (ջերմային) և մեխանիկական լինել:

Տերմիկ վենտիլացիան ծաղում է շինութուններում և դրոտում յեղած տաք և սառն ողի տարբեր խտության հաշվին: Նահանդիսանում է ամենապարզ և դյուրությամբ իրագործելի միջոցը, բայց կիրառել կարելի յե այն միայն այն դեպքում, յերբ շրջապատող ողբ վարակված չե ԹՆ-ով:

Վարակված շինության տերմիկ վենտիլացիայի համար անհրաժեշտ է կատարել հետևյալը.

1. Բանալ բոլոր պատուհանները և դռները, վորպեսզի միջանցուկ քամի ստեղծվի, ընդվորում ողբ պետք է սանդուխքի վանդակից սենյակների միջով դեպի պատուհաններն ուղղվի: Դրանով կանխվում է ԹՆ-ի փչումն ամբողջ տանը: Բոլոր հարևան շինութունների պատուհանները և դռները այդ ժամանակ պետք է փակվեն: Յեթե ողի այդպիսի ուղղություն չի կարելի ստեղծել, բաց են անում միայն պատուհանները:

2. Շինութունից հեռացնել այն բոլոր առարկաները, վորոնք կարող են կլանել հեղուկ ԹՆ կամ նրա գոլորչիները: Այդ բանը վերաբերում է ամենից առաջ փափուկ կահույքին (դիվաններ, ներքնակներ, գորգեր և այլն) և հագուստին: Փափուկ առարկաները դադահանվում են համաձայն այն ցուցումների, վորոնք տրված են հագուստի դադահանմանը վերաբերող բաժնում:

3. Շինության ներսում վառել փոքրիկ խարույկ լրագրական կամ անպետք թղթից— մակուլատուրայից, հատակի վրա նախորոք շարժական խարույկ փռելով: Նույն նպատակին կարելի յե հասնել սենյակի անկյուններում դասավորելով վառած կրակարաններ, նավթավառներ, պրիմուաներ կամ գոգիչ լամպեր: Ինքնըստինքյան հասկանալի յե, վոր դադահանման այս յեղանակը պետք է կատարվի միմիայն հրդեհային ըիակատար անվտանգության պայմանում (քարե հատակներ, սվաղած պատեր, կրակասնվտանդ պաշտպանական հագուստ և այլն):

Առանձին գտնվող շինության վարակման ժամանակ եֆեկտիվ միջոց է հանդիսանում խարույկների վառումը շինության շուրջը: Սարույկները կարող են նախորոք պատրաստված, շարժական լինել, կամ թե չե կազմակերպվում են հետևյալ կերպով. շինության պատերից 3—4 մ հեռավորության վրա և նրանց գուղահեռորեն խրամանդիկներ են փորվում 2-ական մետր

յերկարութեամբ, 0,2 մ խորութեամբ, խրամանդիկները արան-
քում անցքեր են թողնում 1 մ լայնութեամբ: Խրամանդիկները
մեջ դարձում են ջախ, հարդ, հնոտի, առատորեն ջրցանված
կիղանյութ (դյուրավառն) խառնուրդով (նավթ 50 0/0, կերոսին
30—400/0, բենզին 10—20%), և վառում են: Տաք ողբ, վեր
բարձրանալով, հզոր կոնվեկցիոն հոսանք է ստեղծում, վորն
իր հետեից շինութեանից քաշում է թունավորված ողբ:

Սակայն այս յեղանակը կարելի չէ կիրառել, միայն կատա-
րելով հետևյալ միջոցառումները.

- ա) ապահովելով հրդեհային լիակատար անվտանգությունը
և կանչելով հրդեհաշեջ պաշտպանութեան ներկայացուցչին.
- բ) հաշվի առնելով հողմի ուղղությունը. յեթե հողմը բը-
նակելի ավանի կողմը լինի, ապա այդ յեղանակը չի կարելի կի-
րառել կիսակայուն և կայուն թՆ-ի ժամանակ (քլորսվիկրին,
գլիֆոսպեն և այլն):

ՄԵԽԱՆԻԿԱԿԱՆ ՎԵՆՏԻԼԱՑԻԱ

Շինութեանների մեխանիկական վենտիլացիան իրազործվում
է վարակված ողն արածածելու միջոցով, կամ թե չէ նույն ողբ
այն մաքուր ողով դուրս մղելով, վորը սեղմվում է շարժական
վենտիլատորի ողնութեամբ (ծխառեֆուլյուր—սեղմիչ): Այս յե-
ղանակն առանձնապես պիտանի չէ ողն այնպիսի շենքերում
մաքրելու համար, ինչպիսիք են նկուղներ, ներքնահարկեր, ջր-
հորներ, վորտեղ դժվար է բնական վենտիլացիա ստեղծել:

Բացի դրանից, դազահանման համար կարող է ողտազործ-
վել ջրափոշեցրումը: Ջրափոշեցրումը կիրառելի չէ վատ հող-
մահարվող փակուղիներում, խոր բակ—ջրհորներում, բաց վո-
սերում և այսորինակ տեղերում թունավորող դազակերպ նյու-
թերի նշանակալի կուտակումների դազահանման համար:

ՌԻՆ ԳԵՄԻԱԿԱՆ ԳԱԶԱՀԱՆՈՒՄԸ

Քիմիական նյութերով դազահանելուն դիմում են այն դեպ-
քերում, յերբ մյուս յեղանակները կիրառելի չեն: Գազահա-
նումն այդ դեպքում հանդում է այն լուծույթների շրջապրմա-
նը, վորոնք պատրաստված են սոորե, 3 աղյուսակում մատնա-
նշված ռեցեպտուրաներին համաձայն:

Շրջապրումն իրազործվում է ՐԴՊ—1-ի, «Պոմոնա», «Պիո-
ներ» և այլ ապարատներով, վորոնք նկարագրված են ավելի ա-
ռաջ:

Նկատելով, վոր դազահանող ստորաբաժանումները միջոցներ
չունեն թՆ-ի կոնցենտրացումն ողում վորոշելու համար, ան-
հարկին է մատնանչել դազահանող նյութերի ծախսման ընդհա-
նուր նորման:

Ուտի դազահանման նորմա յե ընդունվում մատնանչված
կոնցենտրացման (աղյուս. 3) 1 և լուծույթը 1 մ3 վարակված
ողին: Յեթե ողում տակավին թՆ-ի հետքեր են մնացել, դա-
զահանումը կրկնում են:

Ա Ղ յ ու ս ա կ 3
Գազահանող լուծույթների ռեցեպտուրա

ԹՆ անունը	Ռեցեպտի №	Գազահանող նյութեր	Քանակը
			1 լիտր ջրին
Քլոր	1	Հիպոսուլֆիտ	0,021 կգ
		Սոդա	0,113 կգ
		Ուտիչ նատրոն	0,005 կգ
Գլիֆոսպեն	2	Ամոնիակ 10%	0,1 1
Կապտաթիու	3	Պլինձի արջասպ	0,06 կգ
		Ամոնիակ 25%	0,015 1
»	4	Յերկաթի (3) քլորիդ	0,05 կգ
		Ուտիչ նատրոն	0,08 կգ
Քլորսվիկրին	5	Սուլֆիա	0,12 կգ
		Սպիրտ	0,1 1
Արսենային թՆ	6	Ուտիչ նատրոն	0,1 կգ

ՀԱԳՈՒՍՏԻ ՅԵՎ ՏՆԱՅԻՆ ԿՆՆՑԱՂԻ ԶԱՆԱԶԱՆ ՓԱՓՈՒԿ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԳԱԶԱՀԱՆՈՒՄԸ

ՀԱԳՈՒՍՏԻ ՎԱՐՍԿՄԱՆ ԲՆՈՒՅԹԸ

ԹՆ-ի ներգործութեանը կարող են յենթարկվել հաղուստի և
վտանամանի բոլոր տեսակները: Անկայուն և կիսակայուն թՆ-ով
վարակումը յերկարատե չի լինում և վտանգավոր է հանդիսա-

Ըստ մատերիալի բնույթի հազուստը բաժանվում է հետևյալ խմբերի:

1. Բամբակի և վուշի մատերիալից (կտրից) պատրաստված հագուստը և մերմակեղենը դադաճանվում են 30 բուպեյի ընթացքում յեռացնելու ճանապարհով, հաշվելով ջրի յեռման դալու մոմենտից: Յերեան յեկող աղաթթվի չեղոքացման համար յուրաքանչյուր լիտր ջրին նախորդ 20 դրամ (2 %) բյուրեղային սոդա յեն ավելացնում: Ջրի քանակը վերցնում են 10 լ-ը 1 կը ճերմակեղենի հաշվով: Յեռացումից հետո անհրաժեշտ է հազուստը և ճերմակեղենը մի անգամ ևս լվանալ, հիլբոլիզի պրոդուկտների անհաճո հոտից ազատվելու համար:

2. Բրդե մատերիալից պատրաստված հագուստը դադաճանվում է հատուկ կամերաներում 100 ջերմաստիճանում մի քանի ժամվա ընթացքում:

3. Կաշիմ և մուշտակը դադաճանվում են հատուկ կամերայում 60 ջերմաստիճանում մի քանի ժամվա ընթացքում:

4. Ոլիֆած գործվածքները դադաճանվում են հատուկ կամերաներում:

5. Ռետինե գործվածքները դադաճանվում են ջրում յեռացվելով կես ժամվա ընթացքում, հաշվելով ջրի յեռման դալու մոմենտից: Յեռացումից հետո օեախնե առարկաները վողովում են մաքուր ջրով և կախ են արվում չորանալու համար ախպես, վոր նրանցից հոսի ջուրը:

Շատ մեծ տներում դոյություն ունեցող հանրային լվացատները կարող են հարմարեցվել վարակված ճերմակեղենի դադաճանման համար: Այդ դեպքում պետք է կատարվի «մաքուր» կեսի լիակատար բաժանումը «վարակվածից». մուտքը և յեղը «վարակված» կեսը պետք է իրադործվի միմիայն դուշի (ջրցանի) սենյակի միջով: Ճերմակեղենի դադաճանման համար ողտագործվում են ունեցած մոխրաջրանոթները:

Բրդե հազուստը, վոտնամանը, մուշտակե իրերը, փափուկ կահույքը պետք է ռայոնական դադաճան կայանները տարվեն կամերաներում հատուկ դադաճանման յենթարկվելու համար: Այդպիսիների բացակայության կամ բեռնվածության դեպքում հարկ կլինի բնական դադաճանման դիմել:

նում լոկ այնքան, վորքան նրանք ընդունակ են վարակելու շրջապատող ողը: Այդ դեպքերում հազուստի դադաճանումն իրադործվում է սովորական հողմահարմարք մինչև հոտի վոչընչացումը... Այդ իսկ մեթոդը կիրառվում է և այնպիսի առարկաների դադաճանման համար, վորոնք վարակված են կայուն թՆ-ի գոլորչիներով կամ թուենավոր ծխերով: Վերջին դեպքում հողմահարմանն ուղեկցում են հազուստը յեռանդաշխն թափահարելով և թոթափելով:

Այն առարկաները, վորոնք վարակված են մառախլակերպ և հեղուկ իպրիտով, վերջինիս դանդաղ գոլորչացման հետևանքով մնում են վտանգավոր յերկարատե ժամանակ, ուստի և պահանջում են հատուկ դադաճանում:

Նայած տակտիկական իրադարձությանը վարակման բնույթը կարող է հետևյալը լինել.

ա) շրջացրումն ողից— ինքնաթիռով կամ քիմիական և հեռակայական ուղիքի պայթյունի ժամանակ նշանակալի բարձրության վրա. միջին սպասելիք խտությունն այդ դեպքում հավանորեն 10—15 գ-ից չի անցնի հազուստի 1 մ³ մակերեսին¹, նրկատի ունենալով, վոր ողից շրջացրելիս վարակումը կարող է նշանակալի տերիտորիա ընդգրկել, այդ դեպքը սպառնում է մարդկանց մասսայական վարակմամբ.

բ) համատարած ջրցանումն ավիաուղիների կամ թՆ ունեցող ամպուլների պայթյունի ժամանակ.

գ) առանձին քուղիներ, կաթիլներ և պատահական վարակումներ հազուստի վրա, ինչպես նաև վոտնամանի ուժեղ վարակումը դեղագացիոն, սակրա-վերականգնիչ և սանիտարական աշխատանքների ժամանակ.

դ) կայուն թՆ գոլորչիների ներծծումն գործվածքի ծակոտիկների մեջ վարակված տեղամասում յերկարատե մնալու ժամանակ:

Թվարկված բոլոր դեպքերում հազուստը ողի վարակման և այն մարդկանց անմիջական վարակման աղբյուրն է հանդիսանում, վորոնք շփվում են նրա հետ: Ուստի հազուստի դադաճանման բոլոր աշխատանքները պահանջում են ինչպես շնչառության ճանապարհների, այնպես և կաշվի (մաշկի) ծածկութենների պաշտպանությունը:

1) Համաձայն «Գազահանման հրահանգի» § 9-ի

Բնական դադաՀանման հրապարակիչները պետք է նկատի առնենալ նախորոք և համապատասխանաբար պատրաստել դըրանք, ընդվորում նրանք պետք է համապատասխանեն յերկու հիմնական պահանջներին:

ա) հրապարակիչում կախ արված առարկաները պետք է լայ հողմահարմվեն և ճառագայթվեն արեգակից:

բ) հրապարակիչի տեղադրութունն այնպես պետք է ընտրվի, վորպեսզի վարակված սղը հողմի միջոցով դեպի ընակելի շինութունները չմղվի:

Այս պայմաններին ալելի կամ պակաս չափով բավարարում են դադահանման հրապարակիչները, վորոնք առանձնացված են քաղաքի ծայրամասերում, ստադիոններում, սպորտ հրապարակիչներում և պարապուտներում (ազատ տեղերում):

ՋՐԻ ՅԵՎ ՍՆՆԴԱՄԹԵՐԻՔՆԵՐԻ ԳԱԶԱՀԱՆՈՒՄԸ

Ջուրն այս կամ այն աստիճանով լուծում է դրեթե բոլոր ԹՆ: Անկայուն ԹՆ ջրից հեռացվում են յեռացման ճանապարհով, բայց կայուն ԹՆ (իպրիտը, լյուլիլտը) ջուրը բոլորովին անպետք են դարձնում խմելու համար մինչև անդամ յեռացումից հետո: Խմելու համար նախանշված ջուրը դադահանվում է Տարասովի սկզտեմի Ֆիլտրի ողնությամբ և համաձայն Ֆիլտրին մոտ կախած հրահանգի:

Տեխնիկական նպատակների համար ԿԹՆ-ով վարակված ջուրը կարելի յե դադահանել յեռացմամբ: Ջուրը լցնում են անոթի մեջ և թողնում են, վոր պարզի. վորից հետո ջրի վերին 2/3 մասը զգուշությամբ կիսատում են (զատում են) և յեռացնում: Մնացած մասը նստած կայուն ԹՆ-ի հետ թափում են փոսը, վորտեղ քլորակիր է լցրած: Վարակված ջուրը, վորը յեռացման չի յենթարկված, մնում է վտանգավոր մաշկի ծածկույթների համար:

ԿԹՆ-ով վարակված պրոդուկտների (կենսամթերքների) դործածութունը մարդու կողմից կարող է մարսողության դործարանների չափազանց ուժեղ վարակումներ առաջ բերել մահացու յեղով: Մանդամթերքները կաթլահեղուկ ԿԹՆ-ով վարակվելու դեպքում դործածության համար անպետք են և, վորպես կանոն, պետք է վորջնչացվեն:

Վորովհետև ԹՆ-ով խիստ վարակված սննդամթերքները շատ դժվար է դադահանել, անհրաժեշտ է թույլ չտալ նրանց վարակումը: Դրա համար «Ողային տաղնապ» աղանջանի ժամանակ անհրաժեշտ է սննդամթերքները ծածկել և պահել պահարաններում, ապակե և թիթեղյա բանկաներում, կաթսաներում, արկղներում և այս որինակ ամանեղենում:

V. ԳԱԶԱՀԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ՅԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այն աշխատանքները կատարելու համար, վորոնք կապված են քիմիական հարձակումից առաջացած հետևանքների լիկվիդացման (լուծարքի) հետ, բնակելի տան ինքնապաշտպանության խմբակում «քիմիական ողակ» է կազմակերպվում:

Քիմիական ողակի անմիջական խնդիրը հանդիսանում է «անհետաձգելի հակաֆիմիական ռզուլթուեր», վորը բաղկանում է՝

ա) քիմիական հետախուզությունից,

բ) բնակչութունը վարակման ոջախից դուրս հանելու համար և ինքնապաշտպանության խմբակի մյուս ողակների աշխատանքի համար անվտանգ պայմաններ ստեղծելուց:

դ) դադահանման աշխատանքներից:

Քիմիական ողակը միշտ հնարավորութուն ունի վարակման ոջախն առաջինը դալու և ԹՆ բռնելու նրա ծավալման հենց սկզբում: Այդ բանը թույլ է տալիս լիկվիդացիայի յենթարկելու ԹՆ-ի նշանակալի մասը մինչև անգամ այն փոքրաթիվ միջոցներով, վորոնք դումվում են ողակի սարք ու կարգում, և դրանով իսկ դյուրացնել հետագա դադահանման աշխատանքները:

Վերջնական լուծարքը վարակման մեծ ոջախի առկայությամբ իրագործվում է հատուկ դադահանող ջոկատներով կամ խմբերով, վորոնք համապատասխան տեխնիկա և ունակություններ ունեն:

Քիմիական ողակը սովորաբար բաղկացած է (վորպես մինիմում) 5 հոգուց՝ ողակի հրամանատարից և 4 մարտիկներից:

Բացի դրանից, միշտ ձեռքի ստակ կան մի քանի պահեստիներ:

Ողակը համարացվում է (կոմպլեկտացվում է) տան այն բնակիչներից, վորոնք ոժտված են բավականաչափ առողջությամբ և տոկոսներով: Ողակի մարտիկները պետք է այնպես մարզված լինեն, վորպեսզի կարողանան կարիքի դեպքում իրար փոխարինել:

Գազահանման աշխատանքների հաջող կատարումը մարտական իրադրություն մեջ պահանջում է հրամանատարի հրամաններին ճշգրիտ կատարումը և հակաքիմիական դիտակցական կարգապահություն: Հրամանատարի բոլոր հրամանները պետք է կատարվեն անառարկելիորեն, ճշգրիտ և արագ:

ԳԵՄԻԱԿԱՆ ՈՂԱԿԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Ողակի հրամանատարն անմիջականորեն և ամեն տեսակետներից յենթարկվում է ինքնապաշտպանություն խմբի պետին:

2. Նա պատասխանատու չէ իր ողակի մարտական պատրաստության համար և տեխնիկական միջոցների ու այն դաղահանող մատերիալների կանոնավոր վիճակի համար, վորոնք կան ողակի սարք ու կարգում (սպառազինություն մեջ):

3. «Ողային տաղնապ» (ՈՏ) ազդանշանի համաձայն, ողակի կայացած հավաքից հետո, հրամանատարը ինքնապաշտպանություն խմբակի պետին ծանուցում է (դեկուցում է) աշխատանքները կատարելու ողակի պատրաստության աստիճանի մասին:

4. Հրամանատարը ղեկավարում է մարտիկների աշխատանքները. ա) քիմիական հետախուզություն. բ) վարակման ոջախից անցման ուղիների կառուցումը դ) դանազան դազահանման աշխատանքները և զ) այլ մարտական աշխատանքներ կատարելիս, վորոնք կատարվում են վորպես ողնություն ինքնապաշտպանության խմբակի մյուս ողակիներին:

5. Հրամանատարը հետևում է (հսկում է) քիմիական անվտանգությունը վարակման ոջախում ինչպես իջ ողակի աշխատանքի, այնպես էլ ինքնապաշտպանության խմբակի մյուս ողակիների աշխատանքի ժամանակ:

6. Նա ստուգում է դազահանման լիակատարությունն ողակի աշխատանքների ավարտումից հետո:

ՈՂԱԿԻ ՄԱՐՏԻԿՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. «Ողային տաղնապ» ազդանշանով մարտիկներն անհատապես ներկայանում են իրենց ողակի հավաքի վայրը:

2. Մարտիկներն իրենց ամբողջ աշխատանքի ժամանակ յենթարկվում են անմիջականորեն քիմիական ողակի հրամանատարին և դործում են նրա ցուցմամբ:

3. Նրանք հսկում են այն տեխնիկական միջոցների և հագուստի կանոնավոր վիճակին, վորոնք ամբացրած են առանձնապես նրանցից յուրաքանչյուրին:

4. Նրանք ճշտիվ կատարում են քիմիական նախազուգույթյան այն բոլոր ձեռնարկումները, վորոնք հրամանադրված են դազահանման աշխատանքների ժամանակ:

ԳԵՄԻԱԿԱՆ ՈՂԱԿԻ ՍՍՐԲ ՈՒ ԿՍՐԳԸ

Ողակի սպառազինություն համար դռնվում են հետևյալ առարկաները.

ա) պաշտպանական կոմբինեզոններ կոշիկներով և ձեռնոցներով— 5 կոմպլեկտ.

բ) հակադաղեր— 5 հատ.

գ) հակաքիմիական և անհատական սանիտարական կապոցներ (փաթեթներ)— 5 կոմպլեկտ.

դ) ԲԳՊ—1— 1 հատ.

յե) քիմիատախուզի պայուսակ— 1 հ.

զ) «Ձղջիկ» լապտերներ— 5 հ.

է) ցանկապատման նշաններ— 10 հ.

ը) մաղապատգարակներ— 1 հ.:

Միևնույն ժամանակ ինքնապաշտպանության խմբակի մյուս ողակիների սպառազինության համար կա հետևյալ դույքը, վորը կարելի չէ ողտադործել դազահանման աշխատանքների ժամանակ, այն է, յերկաթե թիեր— 4 հ., կացիներ— 2 հ., լինդեր— 2 հ.:

Բացի դրանից, պետք է ամեն կերպ ողտադործել տան դանազան դույք, վորը պիտանի չէ դազահանման աշխատանքների համար, և յեթե հնարավորություն կա, ապա ձեռք բերել հետևյալ առարկաները. ա) զոդիչ լամպեր 1—2 հ., բ) հիդրոպուլտեր— 1 հ., գ) ՎԳՊ—1 — 1 հատ, դ) ներկարարական

վրձիններ— 2 4., յե) ցինկապատած դուլեր— 4 4., զ) պարտեզի ցնցուղներ 10—15 լիտրանոց— 3—5 4.:

Մոշոր բնակելի տները կամ միավորությունները կարող են և առավել հզոր մեքենայացված միջոցներ ունենալ, որիննակավտումբիլային կախովի գազաեան ապարատներ, «Պոմոնա» սրակիչ և ուրիշն.:

ԳՈՒՅՔԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ամբողջ գոյքը և մատերիալները պետք է պահվեն համաձայն պահպանության գոյություն ունեցող կանոնների: Մասնավորպես, հակազգեբը պետք է պահել չոր վենտիլացվող (ուղափոխվող) շինություններում, վորտեղ ողի ջերմաստիճանը պահպանվում է 0-ից մինչև +15°C սահմաններում և հարարեբական խոնավությունը 50—60%: Վո՛չ մի դեպքում չի կարելի հակազգեբը պահել մի շինության մեջ կամ քլորակրին և այլ դադահանման նյութերին հարևան:

Հակազգեբ պահելու համար կառուցում են ստելլաթներ 0,6 մ լայնությամբ: Ստելլաթները տեղավորվում են 0,5 մ պատերից և 1,5 մ ջերմացման ապարատներից հեռու:

Գազահան ապարատները պետք է պահվեն մաքուր, կանոնավոր և քսուքով ծածկված վիճակում: Նրանց դնությունը կատարվում է տարին յերկու անգամ:

Կիլանյութ խառնուրդը, լուծիչները և այլ հրավտանդ մատերիալները պահվում են ընդհանուր հիմունքներով:

Պաշտպանական հագուստի պահումը

Պաշտպանական հագուստը և վոտնամանը, ռետինած և ոլիֆած կոմբինեզոնները, պաշտպանական թիկնոցները, Փարտուկները, ռետինե ձեռնոցները և կոշիկները (սապոդները) պետք է պահել +6-ից մինչև +12 C ջերմաստիճանում և 60—65% հարարեբական խոնավությամբ:

Առավել ցածր ջերմաստիճանում ռետինած առարկաները սաստիկ կոշտանում են, իսկ ոլիֆածները փխրուն և դյուրաբեկ են դառնում: Նորմայից ավելի բարձր ջերմաստիճանում ռետինն արագորեն հնանում է, ռետինած հագուստը և բամբակի թիկնոցները չորանում են:

Բարձր խոնավությունը ռետինած հագուստը նամակալացնում է և կարող է բորբոս ու փտացում առաջացնել:

Շինությունները և պահելու կարգը պետք է լիահույս ապահովեն դույքը մեխանիկական վնասումներից (մաշվելուց, քերծվելուց, ծակվելուց, պատռվելուց) և կրծողների փչացումից:

Ռետինած հագուստը չպետք է շփվի ժանդոտման յենթարկված մետաղե առարկաների հետ, յուղած առարկաների և քիմիական աղտիվ առարկաների ու լուծիչների հետ:

Ռետինած և ոլիֆած հագուստը չպետք է շփվի մետաղե առարկաների հետ: Նա պահվում է շուռ տված ձևով կախարանթեկնոցների վրա կախած, 1 մ-ից վո՛չ մոտիկ ջերմուցիչ ապարատներից:

Բամբակե թիկնոցները պահվում են կապկապած փաթեթներով արկղներում կամ ստելլաթներում:

Ռետինե ձեռնոցները և կոշիկները պահվում են հատուկ նեցուկների վրա կամ ունկերից կախված:

Քլորակրի պահումը

Քլորակիրը պահեստ է դալիս (մտնում) փայտե տակառնեբով, սովորաբար 50 լ տարողությամբ: Տակառը ներսում սուսընձած է կրկնակոշիկ կամ դուտրոնած թղթի շերտերով: Տակառի հատակներից մեկում կա մի բացվածք 30 մմ տրամագծով քլորակրի փորձամուշներն ընտրելու համար: Բացվածքը պընդորեն ծածկված է փայտե պարաֆինած խցանով և դուդրոնով լցված: Ոցանի վերևից նրա պաշտպանության համար թիթեղյա տախտակ է դամված:

Քլորակիրը պետք է պահել փակ, չոր, չտաքացվող շինություններում՝ թթվաիայուն մատերիալներից պատրաստված տանիքով: Շինությունները պետք է պարբերաբար հողմահարել չոր յեղանակին:

Քլորակրի հետ միատեղ և նրան հարևան չի կարելի ժանդոտման յենթակա մետաղե առարկաներ պահել:

Քլորակիրը պահելուն դուդընթաց կորցնում է աղտիվ քլորը և, համապատասխանաբար, իր գազահանող հատկությունները և, համապատասխանաբար, իր գազահանող հատկությունները: Հրալիորեն ավելի քիչ են աղտիվ քլորի կորուստները, յեթե տակառները դրսից կպրած են: Տակառների կպրումը կատարվում է պահեստում հետևյալ կերպով:

1) զույլի մեջ տաքացվում է կուպրը մինչև հեղուկ վիճակ ստացվելը, բայց առանց գերաջեռուցման:

2) կեղևաթերթերի վրձինով կուպրը քսվում է տակառի մակերեսի վրա հավասար շերտով բոլոր կցվածքները և ձեղքերը ուշի-ուշով կարնելով:

3) սկզբում կուպրվում է հատակը, հետո կողքերը և, վերջապես տակառի վերին մասը:

Չի կարելի կուպրած տակառները գլորել մի տեղից մյուս տեղ կպրի մեկուսիչ (իզոլացիոն) շերտը խախտելուց խուսափելու համար:

Քլորակրի զուրս ածելը տակառներից կատարվում է հակազգեքով և պաշտպանական հագուստով: Հատակի վրա ամփած քլորակիրը պետք է մաքուր հավաքել և զուրս տանել խոնավութային յերևան գալուց խուսափելու համար:

Քլորակրի պահման ընդհանուր դնությունը կատարվում է 10 օրը մի անգամ: Մանրամասն դնությունը, անալիզի համար քլորակրի փորձանմուշները վերցնելու հետ, տեղի յե ունենում 3 ամիսը մի անգամ:

Պահեստարանների շենքերը կարող են խնչպես քարե, այնպես և փայտե լինել, բայց նրանց բոլոր կառուցվածքները պետք է, վորքան հնարավոր է, հերմետիկ (ոդախիտ) լինեն, վորպեսզի վատ որերին՝ ողի հարաբերական մեծ խոնավության հետ՝ նամությունը չթափանցի շինությունների մեջ:

ՔԻՄԻԱԿԱՆ ՈՂԱԿԻ ՄԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

ՈՂԱԿԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԸՄՊԱՌՆԱԼԻՑ ԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԱԶԴԱՆՇԱՆԻ ՀԱՄԱԶՍԵՆ

«Սպառնալից դրություն» հայտարարելուց հետո քիմիական ողակի մարտիկները և հրամանատարը պարտավոր են խուսափել ներկայանալ վաղորոք հաստատված հավաքի վայրը և պատրաստել այն բոլոր նյութական և տեխնիկական միջոցները, վորոնք կարող են պահանջվել զազահանման աշխատանքների ժամանակ:

Այդ բանի համար հարկավոր է կատարել հետևյալը:

1. Ստուգել հակազգեքի և պաշտպանական հագուստի առկայությունն ու կանոնավորությունը: Նկատված անկանոնությունները պետք է հենց տեղն ու տեղը վերացվեն:

2. Հավաքել և կարգի բերել բոլոր զազահանող գործիքները: Յեթե գործիքները յերկարատև պահուստի յեն դրված յեղել, ապա պետք է քսուքի ճարպալի շերտը հեռացնել և գործիքների աշխատանքն ուշիուշով ստուգել, անկանոնություններն իսկույն ևեթ վերացնել:

3. Ստուգել զազահանող մատերիալների և պահեստի մասերի առկայությունը և վորակը, մասնավորապես անհրաժեշտ է փորձարկել քլորակրի և այլ քիմիական նյութերի՝ դեզագատորների վորակը: Ավաղի, հողի, կիզանյութի, մեկուսիչ շինանյութերի պակասորդ պաշարները պետք է լրացվեն:

Մարտիկներից վորևե մեկի շներկայանալու դեպքում, նրա տեղը լրացվում է պահեստայինների հաշվին, վորոնք պետք է լավ հրահանդով փոխեն:

Քիմիական ողակն իր խնդիրների կատարմանը նախապատրաստվում է նաև խաղաղ ժամանակ, և վորպես կանոն, իր մարզանքները կատարում է իր տան իրական տակտիկական պայմաններում և իրական ինվենտարով: Մարզանքային պարապմունքների պլանը պետք է ներփակի հետևյալ խնդիրները.

ա) անհատական պաշտպանության միջոցների կիրառումը.

բ) աշխատանքի տեխնիկական վՊՊ—Ն—ով, զողիչ լամպերով, քլորակրով, կրակային խոնուրդով և այլն.

գ) հետախուզության կատարման տեխնիկան.

դ) զազահանման աշխատանքների կատարումն իՄՆ ինքնաթիռներից փոչեցրելիս, ԿԹՆ պարունակող ուումբի, ԱԹՆ պարունակող ուումբի պայթյունների ժամանակ:

Խնդիրները մշակվում են համաձայն Պաշը-Ավիրաքիմի ծրագրերի և մեթոդական ցուցումների:

Կատարած նախապատրաստության և ներկայացած մարտիկների քանակի մասին ողակի հրամանատարը զեկուցում է խըմբակի պետին: Խմբակի պետը, սովորաբար ստուգելով ողակի պատրաստությունը, մարդկանց իրենց բնակարաններն է արձակում, նախազգուշացնելով, վոր նրանք «Ողային տաղնապ» աղկում, նախազգուշացնելով ներկայանան ողակի հավաքավայրը: զանչանից հետո անհատաղ ներկայանան ողակի հավաքավայրը:

ՈՂԱԿԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՂԱՅԻՆ ՏԱԳՆԱՊ

ԱԶԴԱՆՇԱՆԻ ՀԱՄԱԶՍԵՆ

Ողային տաղնապի աղբանչանով քիմիական ողակը հավաքվում է հավաքի նախորոք նշանակված կայանում: Յանկալի յե,

վոր այդ կայանը տեղավորված լինելը քիմիական դուշը պահանջում է մոտիկ և կարողանար վորպես ուսուցման հարմար տեղ ծառայել ինքնապաշտպանության խմբակի դիտողության պոստի հետ կապ պահպանելու համար:

Ողակը պահեստից ինվենտար և պաշտպանական հագուստ է ստանում, հաղնում է կոմբինեզոններ, կոշիկներ և հակազագեր «պատրաստ» դրուժյան մեջ:

Ողակի հրամանատարը մի անգամ ևս տեխնիկական միջոցների զննություն է կատարում, ինչպես նաև ըստ ցուցակի ստուգում է մարդկանց և ինվենտարի առկայությունը և առանձին ուշադրություն է դարձնում պաշտպանական հագուստը հազնելու կանոնավորության վրա:

Մարտական դործողություններին ողակը փաստորեն պատրաստ լինելու մասին հրամանատարն անհապաղ զեկուցում է խմբակի պետին:

ՈՂԱԿԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ «ՔԻՄԻԱԿԱՆ ՏԱԳՆԱԳ» ԱԶԳԱՆՇՄԱՆ ՀՍՄՍԶՍՍԵՆ

Քիմիական հետախուզություն

Քիմիական վտանգ հայտարարելու ժամանակ կապի ողակի առաջադրած դիտողության պոստը տալիս է «Քիմիական տաղնապ» ազդանշանը: Այդ ազդանշանը արվում է ձեռքի սիրենով (չչակով) կամ զանգը հաճախակի խփելով, ուրիշ կտորին և այլն:

Տան ամբողջ բնակչությունը և նրանց թվում քիմիական ողակի մարտիկները, վորոնք գտնվում են «Քիմիական տաղնապ» ազդանշանի լսելիության ռայոնում, հակազագերը մարտական դրուժյան են բերում (փոխադրում):

Քիմիական իրադրությունը պարզաբանելու համար քիմիական ողակի հրամանատարը քիմիական հետախուզություն է կազմակերպում, ինչպես այդ մատնանշվեց յերրորդ գլխում:

Ողակի աշխատանքը հետախուզությունից հետո

Հիմնվելով հետախուզության տվյալների վրա, ինքնապաշտպանության խմբակի պետը կազմում է զաղահանման աշխատանքների պլանը, վորի մեջ նախատեսում է.

աշխատանքների հերթահանությունը, նրանց կարևորությունը համեմատ.

զաղահանման յեղանակը յուրաքանչյուր հերթի համար. ուժերի, միջոցների և ժամանակի հաշվարկը. մատակարարման բազայի վայրը զաղահանման հրապարակի համար.

զաղահանման տեղամաս մտնելու և պնտեղից դուրս գալու վայրը.

լվացման (վողողման) կետը դնելու ճանապարհները: Նկատի ունենալով, վոր կայուն թն-ի ներծծումը և ԱՌՆ-ի ծավալումն ողում շատ արագ է տեղի ունենում, և յուրաքանչյուր ընդհանր կորստյան հետ զաղահանման աշխատանքների դժվարություններն աճում են, կարևորագույն տակտիկական պայման է հանդիսանում «նպատակահարմար արագությունը»: Այս բանին պետք է հարմարվեն քիմիական ողակի մարտիկները ամբողջ կազմակերպությունը, տեխնիկան և վարժեցումը:

Գաղահան աշխատանքների կարևորության համեմատ դրանք յերեք հերթի յեն բաշխում.

Ողակն առաջին հերթը կատարում է անհապաղ:

Այս հերթին վերաբերում են.

ա) բնակիչներին դուրս հանելու ապահովությունն անցման ուղիներ պատրաստելով, վարակման ոջախից կամ այն վայրերից, վորոնք թն-ի սահմանն սպառնալիքի տակ են գտնվում.

բ) հեղուկ թն-ով ձագարների զաղահանումը, մանավանդ անկայուն և կիսակայուններով հող ցանելու ճանապարհով.

գ) վարակման ոջախի ցանկապատումը: Յերկրորդ հերթը— այն բնակիչի շինությունների և վայրերի զաղահանումը, վորոնք անմիջականորեն սահմանակից են բերանակից տանը, ուստի և բնակչությանն սպառնում են վնասակար գոյություններով: Սրանց են վերաբերում սահմանակից մարթերը, ցցապատները, բակի մերձավոր մասերը, դեպի սրահները տանող անցքերը և այլն:

Յերրորդ հերթը— այն վայրերի զաղահանումը, վորոնցով զնացող անցքը կարող է փակվել առանց վնասի յերկարատե ժամանակով, և այն վայրերի, վորոնք բնակիչի շինություններից հեռու յեն վո՛չ պակաս, քան 50 մետրով:

Գաղահանման յեղանակ յուրաքանչյուր հերթի համար ընտրվում է ինչպես վարակված որյեկտին, վարակման յեղանակը.

կին համապատասխան, այնպես և նախած դադահանող նյութերի և դործիքներէ առկայութեանը:

Ուժերի, միջոցների և ժամանակի հաշվարկն արվում է այն նորմաների հիման վրա, վորոնք բերված են I հավելվածում:

Մատակարարման բազայի վայրն ընտրվում է վորքան հնարավոր է մտա գաղահանման տեղամասին՝ հողմարեր կողմից և այն հաշվով, վորպեսզի մոտակայքում ջուր լինի:

